Ի՞ՆՉ ԱՆԵԼ, ԵՐԲ
ՀԻՆ ԱԿՏԻՎԻԶՄԸ
ՉԻ ԱՇԽԱՏՈՒՄ.

ՌԱԴԻԿԱԼԱՑՆԵԼ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Ի՞ՆՉ ԱՆԵԼ, ԵՐԲ ՀԻՆ ԱԿՏԻՎԻԶՄԸ ՉԻ ԱՇԽԱՏՈՒՄ. ՌԱԴԻԿԱԼԱՑՆԵԼ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Հետազոտող հեղինակներ՝
Մարիամ Խալաթյան,
Արփի Մանուսյան,
Սոնա Մարտիրոսյան

Հետազոտական քննարկումները վարեցին
Տիգրան Ամիրյանը,
Մարիամ Խալաթյանը,
Արփի Մանուսյանը,
Նվարդ Մարգարյանը

Համադրական վերլուծությունը և խմբագրումը՝
Արփի Մանուսյանի

Սրբագրումը՝
Ազնիվ Նասլյանի

Շարվածքը և ձևավորումը՝
Տաթև Եսայանի

ՍՈՑԻՈՍԿՈՊ SOCIOSCOPE

HEINRICH BÖLL STIFTUNG
ԵՐԵՎԱՆ
Հարավային Կովկասի տարածաշրջան

Հետազոտությունն իրականացվել է «Հայնրիխ Բյոլ հիմնադրամի» Հարավային Կովկասի տարածաշրջանի երևանյան գրասենյակի ֆինանսական աջակցությամբ:

Վերլուծության համար պատասխանատու է «Սոցիոսկոպ» ՀԿ-ն: Վերլուծության մեջ տեղ գտած տեսակետները կարող են չհամընկնել հետազոտության մասնակիցների, ինչպես նաև «Հայնրիխ Բյոլ հիմնադրամի» Հարավային Կովկասի տարածաշրջանի երևանյան գրասենյակի տեսակետների հետ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Շնորհակալական խոսք 4

Ներածություն 5

Տեսական և մեթոդաբանական շրջանակ 9

Մեթոդի ընտրությունը 14

Փոխակերպվող քաղաքացիական հասարակություն 16

Քաղհասարակության բևեռացման և
համերաշխության դինամիկան 20

Ակտիվիզմի «ճգնաժամի» շուրջ մտորումներ և
պայքարի նոր ձևերի որոնում 24

Հանրության հետ հարաբերությունների
վերամտածման հարցեր 37

Ամփոփման փոխարեն. Քաղհասարակությունը 2026 թ.
խորհրդարանական ընտրությունների նախաշեմին 44

Գրականություն 54

ՇՆՈՐՀԱԿԱԼԱԿԱՆ ԽՈՍՔ

Խորապես շնորհակալ ենք մեր բոլոր գործընկերներին և ընկերներին, որոնք սիրով համաձայնեցին մասնակցել այս հետազոտությանը՝ ներկայացնելով իրենց գիտելիքը, փորձը և դիտարկումները: Պահպանելով ուղիղ մեջբերումների անանունությունը՝ ցանկանում ենք անվանապես շնորհակալություն հայտնել Տիգրան Ամիրյանին, Արմեն Գրիգորյանին, Մամիկոն Հովսեփյանին, Աշոտ Գրիգորյանին, Նվարդ Մարգարյանին, Աննա Հովհաննիսյանին, Աշխեն Մուշեղյանին, Հայկ Խաչատրյանին, Լենա Հարությունյանին, Գեղամ Բարսեղյանին, Էդգար Վարդանյանին, Վարդինե Գրիգորյանին, Քրիստինա Սոլոյանին, Հռիփսիմե Կիզոգյանին, Էդգար Խաչատրյանին, Նորա Գալֆայանին, Սարինե Հայրիյանին, Նունե Սարգսյանին, Անդրանիկ Շիրինյանին, Նաիրա Սուլթանյանին, Լիկա Զաքարյանին, Յուրի Ավագյանին, Գեղամ Վարդանյանին, Գոհար Շահնազարյանին, Հրանուշ Կարապետյանին, Հովսեփ Խուրշուդյանին, Սոնա Այվազյանին, Գեմաֆին Գասպարյանին, Արթուր Սաքունցին, Ժենյա Մայիլյանին, Գայանե Համբարձումյանին՝ հետազոտական քննարկումներին մասնակցելու համար:

Շնորհակալ ենք նաև նրանց, ովքեր սիրով մասնակցեցին հետազոտությանը, սակայն ցանկացան անանուն մնալ:

Շնորհակալություն ենք հայտնում «Ժողովրդավարության զարգացման հիմնադրամին»՝ քննարկումներին տարածք տրամադրելու պատրաստակամության համար:

Շնորհակալ ենք «Հայնրիխ Բյոլ հիմնադրամի» Հարավային Կովկասի տարածաշրջանի երևանյան գրասենյակին՝ հետազոտական այս նախաձեռնությանը ֆինանսապես աջակցելու և այն հնարավոր դարձնելու համար:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Քաղաքացիական հասարակության գործունեության սահմանափակումը և դրա վրա ճնշումները համաշխարհային մակարդակում ակներև դարձան 2000-ականների կեսերից: Առաջին անգամ այս երևույթը փաստագրվել է 2006 թվականին, իսկ արդեն մեկ տասնամյակ անց, CIVICUS-ի տվյալներով, աշխարհի յուրաքանչյուր յոթ մարդուց վեցը ապրում էր այնպիսի երկրում, որտեղ քաղաքացիական հասարակությունը լուրջ ճնշումների է ենթարկվում (Buyse, 2018): 2024 թվականին, CIVICUS Monitor-ի զեկույցի համաձայն, արձանագրվել է քաղաքացիական հասարակության տարածքի ամենավատթար վիճակը զեկույցի թողարկումից ի վեր, ըստ որի՝ այսօր աշխարհում բնակչության ընդամենը 2.1%-ն է ապրում ազատ քաղաքացիական տարածքով երկրներում (CIVICUS, 2024):

Քաղաքացիական հասարակության գործունեության սահմանափակման հիմնական պատճառը հենց պետությունների (ինչպես նաև կորպորացիաների և խոշոր բիզնեսների) կողմից գործադրվող քաղաքական, իրավական և վարչական ճնշումներն են: Ինչպես նշում է իրավագետ Անտուան Բայսը՝ վերլուծելով Քրիս վան դեր Բորգի և Կարոլեյն Թերվինդտի մոդելը, քաղաքացիական հասարակության գործունեության տարածքը ձևավորվում է երեք առանցքային մակարդակներում՝ ինստիտուցիոնալ ուղիների (օրենքներ, ընթացակարգեր, վիճարկման հնարավորություններ), դիսկուրսների (պիտակավորում, շրջանակում, վարկաբեկում) և նոր տարածությունների ստեղծման ու պահպանման կարողության: Այս երեք ուղղություններով կիրառվող բռնի կամ ոչ բռնի ճնշումները հանգեցնում են քաղաքացիական հասարակության տարածքի համակարգային նեղացման համաշխարհային մակարդակում (Buyse, 2018):

Մեկ այլ գործոն, որը մեծապես նպաստում է սրան, ճնշումների աշխարհագրական տարածումն է ժամանակի ընթացքում: Տարբեր երկրների կառավարություններ մեկը մյուսից «սովորում» են քաղհասարակության գործունեության շրջանակը նեղացնելու արդյունավետ մեթոդներ՝ երբեմն բառացիորեն կրկնօրինակելով գործունեությունը սահմանափակող օրենսդրական և վարչական գործիքներ: Այս միտումը տարածվում է ոչ միայն ավտորիտար, այլև հիբրիդային և նույնիսկ ժողովրդավարական ռեժիմներում (Buyse, 2018):

Քաղաքացիական հասարակության գործունեության վրա ազդող համաշխարհային միտումներից մեկը արտաքին ֆինանսավորման քաղաքականության փոփոխություններն են: Դրանցից ամենաազդեցիկը ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի՝ արտաքին աջակցության ծրագրերի լայնածավալ կրճատման որոշումն էր[1]: Մասնավորապես՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (USAID) ծրագրերի շուրջ 90%-ի կասեցումը բերեց բազմաթիվ հասարակական կազմակերպությունների ֆինանսավորման կտրուկ նվազման, որի հետևանքով նրանց 72%-ը հայտնվեց օպերացիոն դժվարությունների առջև՝ անձնակազմի և ռեսուրսների կրճատում, ծրագրերի դադարեցում և կայունության կորուստ[2]:

Քաղաքացիական հասարակության վրա ճնշումների դրսևորումները տարբեր երկրներում կարող են պայմանավորված լինել ինչպես տեղական համատեքստերով ու կոնկրետ ՔՀԿ-ներով, այնպես էլ ընդհանուր քաղաքական միջավայրով: Որոշ դեպքերում սահմանափակումները նպատակաուղղված են, մյուսներում քաղհասարակությունը պարզապես դառնում է ավելի լայն քաղաքական գործընթացների զոհ (Buyse, 2018): Այնուամենայնիվ, գլոբալ առումով, քաղաքացիական հասարակությունների դեմ ճնշման մեխանիզմների օգտագործումը և նրանց տարածքի նեղացման երևույթը արտացոլում են ավելի լայն և կառուցվածքային միտումներ:

Այդ միտումներն արտացոլվում են նաև Հարավային Կովկասում: Ղարաբաղյան երկրորդ պատերազմից հետո Ադրբեջանի ավտորիտար իշխանությունն էլ ավելի ամրապնդվեց՝ օգտագործելով ազգային դիսկուրսը, որը հիմնված է երկարամյա հակամարտության, հասարակության ռազմականացման և հայրիշխանական կառուցվածքների վրա (Kluczewska, Luciani, 2025): Քաղաքացիական հասարակության վրա ճնշումներն էլ ավելի են խորացել, մինչդեռ երկրի ցամաքային սահմանները շարունակում են մնալ փակ՝ պաշտոնապես Քովիդ-19 համավարակի պատճառաբանությամբ, ինչը հանգեցնում է լրացուցիչ մեկուսացման և վախի

1 Exec. Order No. 14169, 90 FR 8619 (2025). https://www.federalregister.gov/d/2025-02091/page-8619

2 EU System for an Enabling Environment for Civil Society. (2025, March 17). *The Impact of the US Funding Freeze on Civil Society: A Comprehensive Analysis by the EU SEE Initiative.* https://eusee.hivos.org/assets/2025/03/Report-The-Impact-of-the-US-Funding-Freeze-on-Civil-Society_def-170325.pdf

մթնոլորտի ձևավորման[3]: Ադրբեջանցի խաղաղության ակտիվիստ և քննադատական հետազոտող, հասարակագետ Բահրուզ Սամադովը վերջերս ինքնասպանության փորձ արեց Բաքվի բանտում այն բանից հետո, երբ նրան դատապարտեցին 16 տարվա ազատազրկման[4]:

Միաժամանակ տարիներ շարունակ տարածաշրջանում «ժողովրդավարության օազիս» համարվող Վրաստանում քաղաքացիական հասարակության դեմ ճնշումները, մասնավորապես՝ «օտարերկրյա գործակալների մասին» օրենքի ներկայացումը, որը գրեթե բառացի կրկնում է Ռուսաստանի 2012 թվականի օրենքը, ինչպես նաև վերջին տարիներին իշխող «Վրացական երազանք» կուսակցության կողմից գործադրվող բռնությունները և հակաժողովրդավարական քաղաքականությունները, վկայում են տարածաշրջանում քաղաքացիական տարածքի շարունակական նեղացման մասին[5]: Ռուսաստանում այս օրենքը ընդունումից ի վեր ենթարկվել է մի շարք փոփոխությունների և Ուկրաինայի դեմ պատերազմից հետո այնքան է ընդլայնվել, որ գրեթե ցանկացած անձ կամ կազմակերպություն կարող է համարվել «օտար ազդեցությունների կրող» և ենթարկվել պատասխանատվության[6]: Վրաստանում այս օրենքի ներկայացումը հերթական անգամ ընդգծում է այն փաստը, որ պետությունները, հատկապես ավտորիտար ռեժիմները, ակտիվորեն փոխառնում են միմյանց փորձը քաղաքացիական հասարակության ճնշման գործիքների կիրառման մեջ՝ ձևավորելով վարակիչ միտում, որը տարածվում է տարբեր տարածաշրջաններում և քաղաքական համակարգերում[7]:

Հայաստանի քաղաքացիական հասարակությունը, բնականաբար, անմասն չէ այս համաշխարհային և տարածաշրջանային մարտահրավերների ազդեցություններից և շարունակում է իր գործունեությունը այս և տեղական յուրահատուկ խնդիրների և զարգացումների համատեքստում:

3 Shirinyan, A. (2025). *Solidarity without borders: For Bahruz, for Georgia, for all of us.* OC Media. https://oc-media.org/opinion-solidarity-without-borders-for-bahruz-for-georgia-for-all-of-us/

4 Farhadova, A. (2025). *Azerbaijani researcher Bahruz Samadov "attempts suicide in prison"*. OC Media. https://oc-media.org/azerbaijani-researcher-bahruz-samadov-attempts-suicide-in-prison/

5 Law of Georgia on transparency of foreign influence. (2024, May 28). *Legislative Herald of Georgia.* https://matsne.gov.ge/en/document/view/6171895?publication=0

6 Kirova, I. (2024, September 19). *Foreign agent laws in the authoritarian playbook*. Human Rights Watch. https://www.hrw.org/news/2024/09/19/foreign-agent-laws-authoritarian-playbook

7 Freedom House. (2025). *Georgia: Freedom in the World 2025.* https://freedomhouse.org/country/georgia/freedom-world/2025

2018 թվականի Թավշյա հեղափոխությունը Հայաստանում նշանավորեց սոցիալ-քաղաքական նոր իրականության ձևավորման պահը՝ հնարավորություն տալով ինչպես հասարակության լայն շերտերին, այնպես էլ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներին ձևակերպել իրենց սպասելիքներն ու պահանջները փոփոխությունների վերաբերյալ: Հեղափոխությանը նախորդած տարիներին աճող ճնշումները, ինչպես նաև փողոցային պայքարում ներգրավված ակտիվիստների և կառավարության հետ համագործակցության ուղիներ որոնող ՀԿ-ների անհաջող փորձերը իրական փոփոխություններ բերելու ուղղությամբ հանգեցրել էին քաղաքացիական դաշտի հյուծվածության: Այդուհանդերձ, քաղաքացիական հասարակությունը շարունակեց գործել՝ որպես անգործության այլընտրանք փնտրելով փոփոխության հնարավոր ուղիներ: Տարիների ընթացքում կուտակված փորձն ու գիտելիքը, հատկապես փողոցային ակտիվիզմի ոլորտում, դարձան արժեքավոր ռեսուրս, որն իր ազդեցությունն ունեցավ հեղափոխության իրականացման վրա: Հեղափոխությունից հետո քաղաքացիական հասարակության բազմաթիվ ներկայացուցիչներ միացան նոր ձևավորված իշխանություններին՝ զբաղեցնելով տարբեր պաշտոններ պետական կառավարման համակարգում:

Հեղափոխությանը հաջորդած տարիներին Հայաստանի հասարակությունը՝ ընդհանուր առմամբ, իսկ քաղաքացիական հասարակությունը՝ մասնավորապես, անցնում են բազմաշերտ վերափոխումների շրջան: Դրանց խթան են դարձել մի շարք ճգնաժամեր, որոնք հաջորդաբար ձևավորել են հանրային և քաղաքացիական ոլորտի օրակարգը: 2019 թվականին սկսված Քովիդ-19 համավարակը, 2020 թվականի Ղարաբաղյան երկրորդ պատերազմը և 2023 թվականի սեպտեմբերին Լեռնային Ղարաբաղի հայերի զանգվածային տեղահանումը դարձել են այն առանցքային իրադարձությունները, որոնք պայմանավորել են քաղաքացիական հասարակության զարգացման ընթացքը: Այս տեղական և գլոբալ ճգնաժամերը զգալիորեն վերափոխել են ինչպես Հայաստանի քաղհասարակության առջև ծառացած ներքին ու արտաքին մարտահրավերները, այնպես էլ դրա արձագանքման և ադապտացիայի կարողությունները՝ սահմանելով նոր դերեր, պահանջներ և պատասխանատվություններ:

ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿ

Այս հետազոտության մեջ մենք չենք տալիս «քաղաքացիական հասարակության» սահմանումը, սակայն առավելապես նկատի ունենք «պրոգրեսիվ քաղաքացիական հասարակությունը», որ ակադեմիական և ակտիվիստական շրջանակներում ձևակերպում ստացած հասկացություն է՝ նկարագրելու քաղաքացիական հասարակության այն հատվածներին, որոնք ակտիվորեն մարտահրավեր են նետում պահպանողական նորմերին և միտված են սոցիալական և ժողովրդավարական փոփոխությանը: Այս կոնցեպտը ներառում է ինչպես ֆորմալ կազմակերպությունները, այնպես էլ արմատաբուխ շարժումները, որոնք պայքարում են համակարգային անհավասարությունների դեմ: Հայաստանյան իրականության մեջ «պրոգրեսիվ քաղաքացիական հասարակությունը» մեծապես ներառում է ֆորմալ և ոչ ֆորմալ խմբերի, անհատների, որոնց գործունեության առանցքում մարդու իրավունքների և ժողովրդավարության ջատագովությունն է: Այս խմբերը կարևոր դեր են խաղացել հատկապես 2018 թվականի հեղափոխության ընթացքում՝ ոչ միայն ազդելով քաղաքական փոփոխությունների ընթացքի վրա, այլև ի ցույց դնելով պրոգրեսիվ քաղաքացիական հասարակության դինամիկ և փոխակերպվող բնույթը: Նրանց գործունեությունը ցույց է տալիս, որ քաղաքացիական հասարակությունը կարող է հանդես գալ որպես սոցիալական փոփոխության շարժիչ ուժ՝ ձևավորելով հանրային պահանջներ և վերաիմաստավորելով քաղաքական մասնակցության ձևաչափերը:

Վերջին տարիներին տեղի ունեցած բազմաշերտ ճգնաժամերը՝ տեղական, տարածաշրջանային և գլոբալ մակարդակներում, էապես վերաձևել են քաղաքացիական հասարակության գործունեության պայմաններն ու դերակատարումը: Վատթարացող ժողովրդավարությունը, աջական և ֆաշիստական քաղաքականությունների տարածումը, ինստիտուցիոնալ վստահության խորացող ճգնաժամը, ապատեղեկատվության լայն շրջանառությունը, ինչպես նաև քաղաքացիական հասարակության և հասարակության միջև կապի խզումները, բևեռացվածության աճը և հուզական այրման փաստերը հրատապ անհրաժեշտություն են ստեղծում վերարժևորելու քաղաքացիական հասարակության դերն ու գործա-

կանությունը[8]: Այս համատեքստում մենք առաջարկում ենք վերլուծական մի շրջանակ և մեթոդաբանական մոտեցում, որի նպատակն է քաղաքացիական հասարակության վերաբերյալ քննարկումը դուրս բերել իր ավանդական՝ նեղ սահմանումներից և զետեղել հանրային ոլորտի լայն դաշտում: Այսպիսով՝ մեր ուշադրության կենտրոնում են այն պայմանները, որոնք հասարակական կազմակերպություններին և նախաձեռնող խմբերին սահմանափակում են, ինչպես նաև հնարավորություն են տալիս հանդես գալու ոչ միայն որպես քաղաքացիական, այլև որպես հանրային դերակատարներ՝ ձևավորելով ավելի ընդգրկուն, ներգրավված և պատասխանատու հանրային միջավայր:

Մենք բարձրացնում ենք հետևյալ հիմնարար հարցը. ունի՞ արդյոք հայաստանյան քաղաքացիական հասարակությունը բավարար ներուժ հանրային ոլորտի խթանման համար՝ ի նպաստ սոցիալական փոփոխությունների, սոցիալական արդարության և ժողովրդավարության ռադիկալացման: Այս հարցադրումը մենք դիտարկում ենք թե՛ լայն իմաստով՝ քաղաքացիական հասարակության ընդհանուր կարողությունների առնչությամբ, և թե՛ նեղ իմաստով՝ մասնավորապես 2026 թվականի խորհրդարանական ընտրությունների համատեքստում: Մենք հետաքրքրված ենք քաղաքացիական հասարակության՝ հանրային ապատիան հաղթահարելու, խզված հանրային կապերը վերականգնելու և հանրությանը խոսքի ու ներգրավվածության իրական հնարավորություններ տալու գործականությամբ:

Ժողովրդավարության ռադիկալացում ասելով նկատի ունենք ժողովրդավարական գործընթացների խորացում և վերափոխում, որ դուրս կգա ֆորմալ ինստիտուտների և ընտրական մեխանիզմների սահմաններից և ուղղված կլինի կառուցվածքային անհավասարությունների վերացմանն ու բոլորի, հատկապես՝ մարգինալացված և ամենախոցելի խմբերի ուժեղացմանը: Սա նշանակում է ընդլայնել ժողովրդավարության պահանջների շրջանակը՝ ներառելով ոչ միայն քաղաքական իրավունքները, այլև տնտեսական, սոցիալական և մշակութային արդարությունը:

Այս իմաստով, քաղաքացիական հասարակության դերը ժողովրդավարությունը մղելն է դեպի իր ամբողջական ազատագրող ներուժը՝ պահան-

8 Գործականությունը անգլերեն agency բառի թարգմանությունն է, որ առաջարկվել է Սոցիոսկոպի 2024 թ. հրատարակած «Անհատը և հանրայինը. տեքստեր փոխհարաբերության մասին» թարգմանական ժողովածուում (ծնթ.՝ խմբ.):

ջելով այնպիսի ժողովրդավարություն, որ կառուցված կլինի արդարության, իրական ընդգրկման և հաշվետվողականության վրա, այլ ոչ միայն ներկայացուցչության:

Միաժամանակ հանրային ոլորտի գաղափարը դիտարկելու համար մենք հենվում ենք Յուրգեն Հաբերմասի, ինչպես նաև նրա տեսական մոտեցումների հետագա քննադատությունների վրա՝ պնդելով, որ հանրային ոլորտի հղացքը մեծապես նպաստում է ժողովրդավարության մասին բանավեճերի ռադիկալացմանը՝ քաղաքացիական հասարակությանը հնարավորություն ընձեռելով վերագտնելու իր հիմքում ընկած հանրային ներգրավվածության և հասարակական պատասխանատվության իմաստը:

Հանրային ոլորտի գաղափարը ձևակերպել է ֆրանկֆուրտյան դպրոցի ուշ ներկայացուցիչ Յուրգեն Հաբերմասը՝ 1962 թվականին հրատարակված իր «Հանրայնության կառուցվածքային փոփոխությունը» գրքում: Հաբերմասը հանրային ոլորտը սահմանում է որպես խորհրդակցական տարածք, որտեղ մասնավոր քաղաքացիները միավորվում են՝ ձայն տալու հանրային մտահոգություններին և ընդհանուր շահերին՝ նպաստելով ընդհանուր կարծիքի ձևավորմանը (Հաբերմաս, 2021):

Հաբերմասը պատկերացնում է մի համակարգ, որտեղ միավորումները հանդես են գալիս որպես հանրային դերակատարներ՝ հավաքելով և տարածելով քաղաքացիների ձայնը, ստեղծելով հանրային ներգրավման հարթակներ: Նրա դիտարկմամբ՝ հանրային ոլորտը նաև հնարավորություն է ստեղծում ծայրամասային խնդիրներն ու պահանջները բարձրացնելու և հասցնելու ինստիտուցիոնալ քաղաքականության կենտրոն: Ինչպես Հաբերմասն է նշում. «Իր ազդեցիկ և ինքնավար հանրային ոլորտների միջոցով [քաղաքացիական հասարակությունը] ձևավորում է բավարար կենսունակություն ունեցող ազդակներ՝ ծայրամասերից կոնֆլիկտները տեղափոխելու դեպի քաղաքական համակարգի կենտրոն» (Habermas, 1989: 330):

Թեև այս մոտեցումը հետագայում ենթարկվել է քննադատության՝ հատկապես այն բանի համար, որ Հաբերմասը բավարար ուշադրություն չի դարձրել հանրային ոլորտում գոյություն ունեցող իշխանական անհավասարություններին (օրինակ՝ գիտելիքի և ռեսուրսների անհավասար բաշխում, մեդիա հասանելիության տարբերություններ, քաղաքական մասնակցության անհամաչափություն), այնուամենայնիվ, այս

հայեցակարգը մեծ ազդեցություն է ունեցել հասարակագիտական և քաղաքական քննարկումների վրա (Ազատյան, 2007): Հատկապես ֆեմինիստ տեսաբանները վերաշեշտել են, որ հանրային ոլորտը միատարր և հեգեմոն տարածք չէ, և անհրաժեշտ է խոսել ոչ թե մեկ հանրային ոլորտի, այլ բազմակի հանրային ոլորտների գոյության մասին՝ ներառելով մարգինալացված խմբերի ձայները (Fraser, 1990):

Այսպիսով՝ մենք հենվում ենք Սաբինա Լանգի տեսական առաջարկի վրա, որը հանրային ոլորտի գաղափարը «քաղաքացիական հասարակություն» հասկացության մեջ վերաիմաստավորելու երկու ճանապարհ է առաջարկում՝ պատմական և տեսական (Lang, 2013): Լանգը փաստում է, որ վաղ ժամանակակից քաղաքացիական հասարակությունները չեն ձևավորվել բացառապես նախաքաղաքական, ոչ քաղաքական կամ պետությունից անջատված միավորումների հիման վրա: Դրանց արմատները խորապես կապված են հանրային ձայնի, քաղաքացիների ներգրավվածության և քաղաքական պաշտպանության պահանջների հետ (Lang, 2013): 18-րդ դարի վերջի և 19-րդ դարի սկզբի եվրոպական քաղաքացիական հասարակությունները ձևավորվել են որպես հանրային ներգրավման և արդարության պահանջ ներկայացնող տարածքներ: Այս պատմական և տեսական վերարժևորումը ցույց է տալիս, որ քաղաքացիական հասարակությունն ու ժամանակակից ազգային պետությունը սկզբնապես փոխկապակցված են եղել, և առանց հրապարակայնության ու հանրային գործականության արդարադատությունը պարզապես հնարավոր չէր լինի (Splichal, 2002):

Այս համատեքստում անկախ միավորումների և վստահության ցանցերի գոյությունը անհրաժեշտ պայման է, բայց ոչ բավարար՝ քաղաքացիական հասարակությունը լիարժեքորեն հասկանալու համար: Քաղաքացիական հասարակության ձևավորման համար կենսական են ոչ միայն ինստիտուցիոնալ կազմակերպվածությունը, այլև հանրային ձայնի առկայությունը և պաշտպանողական կարողությունները:

Հանրային ոլորտի դուրսմղումը քաղաքացիական հասարակության տեսական մոտեցումներից, հատկապես լիբերալ մեկնաբանությունների շրջանակում, հաճախ նպատակ ունի պաշտպանելու այն գերքաղաքականացումից: Սակայն սա նաև խաթարում է քաղաքացիական հասարակության՝ որպես հանրային դերակատարի ձևավորման և նրա լիարժեք քաղաքական կենսունակության հնարավորությունը: Լիբերալ տեսությունները հաճախ խիստ սահման են գծում քաղաքացիական հասարա-

կության և քաղաքական համակարգի միջև՝ պատկերացնելով հանրային մասնակցությունն ընտրական գործընթացների և փորձագետների «էլիտար հանրայինների» մասնակցությամբ ձևավորված դաշտում: Այդուհանդերձ, նման պատկերացումները սահմանափակում են հանրային ներգրավման տարածքները և խաթարում հանրային ոլորտի՝ որպես ժողովրդավարության հիմնական բաղադրիչի դերակատարումը:

Կենսունակ հանրային ոլորտը քաղաքացիական հասարակության ամենակարևոր չափանիշերից է ժողովրդավարության կայացման տեսանկյունից: Այն հնարավորություն է ստեղծում, որ ժողովուրդը կարողանա ձևակերպել սեփական ապագան. մի կարողություն, որը հատկապես դարձավ հրատապ և բանավեճային Ղարաբաղյան երկրորդ պատերազմից հետո: Հանրային ոլորտը գործում է հաղորդակցության միջոցով՝ համադրելով մշակութային ստեղծագործականությունն ու հիմնավորված բանավեճը՝ գիտելիքի ստեղծման և պետական կամ ինստիտուցիոնալ քաղաքականության վրա ազդեցություն գործադրելու ներուժով:

Հանրային ոլորտի կենսունակությունը պայմանավորված է ներգրավվածության բնույթով. որքան բազմազան, նորարար և ակտիվ է մասնակցությունը, այնքան հանրային ոլորտն ավելի է համապատասխանում իր նպատակին: Այն թուլանում է, երբ սահմանափակվում է կառավարության գործողություններին կամ ձախողումներին պասիվ արձագանքով: Համեմատական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ քաղաքացիական հասարակությունը, երբ ընկալվում է բացառապես որպես միավորման վրա հիմնված, նախաքաղաքական կամ ապաքաղաքական տարածք լիբերալ մեկնաբանությունների շրջանակում, կորցնում է իր հանրային լինելու էությունը: Մոռացության է մատնվում այն հիմնարար փաստը, որ քաղաքացիական հասարակությունները սկզբնապես ձևավորվել են հենց հրապարակայնության և քաղաքական պահանջների հիման վրա: Այս երկու գործոններն էլ վկայում են քաղաքացիական հասարակության և ժամանակակից ազգային պետության խոր փոխկապակցվածության մասին:

Հանրային ոլորտի մարգինալացումը կամ դիտավորյալ դուրսմղումը երբեմն կարող է ընկալվել որպես փորձ՝ քաղաքացիական հասարակությունը «չափազանց քաղաքականացվածությունից» պաշտպանելու անվան տակ, սակայն իրականում այն վտանգում է նրա ազդեցության և իմաստավորման հիմքերը:

Այսպիսով՝ հանրային ոլորտի վերլուծությունն ի հայտ է բերում այն պայմանները, որոնց առկայությամբ քաղաքացիական հասարակության դերակատարները կարող են հանդես գալ որպես հանրային դերակատարներ: Նրանք դառնում են կենտրոնական հաղորդակցային օղակներ հիմնականում մասնագիտացված, ոչ զանգվածային հանրային հարթակներում: Միաժամանակ, ձևավորում են կազմակերպչական միջավայր, որտեղ քաղաքացիներն ունեն հնարավորություն արտահայտելու և հանրայնացնելու իրենց ձայնը: Նրանք նաև ուղղորդում են քաղաքացիական մտահոգությունները՝ ձգտելով ազդելու քաղաքական կամ տնտեսական համակարգերի տարբեր մակարդակների վրա: Եվ վերջապես, այդ ներգործությունն իրականացվում է ինչպես խոսքային, այնպես էլ ոչ խոսքային արտահայտման ձևերով:

ՄԵԹՈԴԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Սոցիոսկոպն իրեն դիրքավորում է իբրև հետազոտական և քաղաքացիական հասարակության կազմակերպություն, որն ակտիվորեն ներգրավված է Հայաստանում քաղաքացիական, քաղաքական և սոցիալական փոփոխությանը միտված գործընթացներում՝ հետազոտությունների, թարգմանությունների և կրթական նախաձեռնությունների միջոցով՝ նպաստելով հանրային գիտելիքի արտադրությանը և շրջանառությանը: Այս առումով քաղաքացիական հասարակության զարգացումների և խնդիրների քննությունն ինքնին նաև Սոցիոսկոպի ինքնադիտարկման դաշտն է: Միաժամանակ Սոցիոսկոպը խնդիր է դնում վերանայելու և վերամտածելու հետազոտողի և հասարակագիտության դերը քաղաքականապես անկայուն, տուրբուլենտ իրադրության, բազմազան ճգնաժամերի և անցումային իրավիճակների պայմաններում: Կազմակերպությունը կասկածի տակ է դնում սոցիալական հետազոտությունների իբրև թե «չեզոք» բնույթը՝ ընդգծելով հետազոտողի և հետազոտվողի միջև առկա ուժային հարաբերակցությունները և ընդունելով, որ հետազոտությունը ոչ միայն չեզոք ճանաչողական գործընթաց է, այլև քաղաքական (Edwards, Mauthener, 2012):

Այս իմաստով՝ ներկայացվող հետազոտությունը նպատակ չունի պար-

զապես փաստագրելու քաղաքացիական հասարակության ընթացիկ դրությունը: Փոխարենը այն առաջարկում է մասնակցային և ինքնառեֆլեքսիվ հարթակ՝ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ համատեղ ոլորտում առկա խնդիրները, մարտահրավերները և դրանց հաղթահարման ուղիները մտածելու համար: Այլ կերպ ասած՝ սա քաղաքացիական հասարակության մասին չէ՝ որպես «ուսումնասիրվող օբյեկտ», այլ քաղաքացիական հասարակության հետ և դրա ներսում իրականացվող քննադատական հետազոտություն է:

Հետազոտության հիմնական բաղադրիչն են հինգ խմբային քննարկումները, որոնք իրականացվել են պրոգրեսիվ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների մասնակցությամբ: Առաջին երկու քննարկումները նպատակ ունեին բացահայտելու քաղաքացիական հասարակության կողմից բարձրաձայնվող մտահոգությունները և խնդիրները, ինչպես նաև համատեղ ձևակերպելու հետազոտական առանցքային հարցերը: Վերջին քննարկման ընթացքում մենք ներկայացրինք նախնական հետազոտական եզրահանգումները և մեր տեսական-մեթոդաբանական հայացքը, ինչպես նաև քննարկման առանցքում էր մեկ հիմնախնդիր՝ քաղաքացիական հասարակության հնարավոր դերն ու ռազմավարությունները 2026 թվականի խորհրդարանական ընտրությունների նախաշեմին:

Անդրադառնալով հետազոտության սահմանափակումներին՝ հարկ է նշել, որ հետազոտությունը չի ընդգրկում քաղաքացիական հասարակության բոլոր հատվածները, թեև փորձ է արվել ապահովելու հնարավորինս լայն ներկայացվածություն: Բացի այդ, հաշվի առնելով վերլուծական փուլին հասնելու ճանապարհին առաջացած հոգնածությունը, ժամանակային սահմանափակումները և ռեսուրսների սղությունը, չենք կարող պնդել, որ ապահովվել է լիարժեք մասնակցային մեթոդաբանության իրականացում: Այս հանգամանքն ինքնին վկայում է այն կառուցվածքային և ինստիտուցիոնալ մարտահրավերների մասին, որոնց առջև կանգնած է քաղաքացիական հասարակությունը Հայաստանում, ինչպես նաև բացահայտում է մասնակցային հետազոտությունների գործնական իրականացման բարդությունը մեր սոցիալ-քաղաքական համատեքստում:

ՓՈԽԱԿԵՐՊՎՈՂ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Հայաստանյան քաղաքացիական հասարակությունը վերջին տասնամյակում անցել է արմատական վերափոխման գործընթաց: Այդ տրանսֆորմացիան պայմանավորված է ոչ միայն ներհայաստանյան քաղաքական անցուդարձով, այլև գլոբալ և տարածաշրջանային ճգնաժամերով: Այդուհանդերձ, ինչպես քննարկումներից երևում է, քաղաքացիական հասարակության հիմնարար փոխակերպման շարժիչ ուժը եղել է 2018 թվականի Թավշյա հեղափոխությունը, որը, կարծես, նոր մեկնակետ դարձավ ոչ միայն քաղաքական դաշտի, այլև քաղաքացիական հասարակության ինքնության համար:

Հեղափոխությունը ոչ միայն քաղաքացիական հասարակության մի ստվար հատվածի դարձրել է քաղաքական դերակատար, այլև առավել ակներև է դարձրել քաղաքացիական հասարակության ներսում քաղաքական դիրքորոշումների և պատկերացումների տարբերություններն ու խորացրել քաղհասարակության ներսում բևեռացումը: Չնայած տարաշերտ և տարաբնույթ խնդիրների առկայությանը և հետահայաց վերադիրքավորումներին՝ այդուհանդերձ, հետազոտական քննարկումներում կարևորվում էր հեղափոխությունը չդիսկրեդիտացնելու հարցը և դրական փոփոխությունները նկատելու կարևորությունը:

Ընդհանուր առմամբ հայաստանյան քաղաքացիական հասարակությունը գործունեություն է ծավալում հոգնածության, ներքին ռեսուրսների սպառման, ինստիտուցիոնալ անկայունության համատեքստում, որն էլ ավելի սուր է դառնում համընդհանուր անորոշության պայմաններում: Ֆիզիկական և մտավոր հոգնածությանը զուգահեռ քաղհասարակությունը գործառնում է նաև ֆինանսական մարտահրավերների համատեքստում. տարբեր ՔՀԿ-ներ շարունակաբար բախվում են ֆինանսական կայունության խնդրին:

Քաղաքացիական հասարակության փոխակերպումը կարելի է պայմանականորեն բաժանել մի քանի փուլերի: Այս փուլերը զուգահեռ են թե՛ ընդհանուր հանրային տրամադրություններին, թե՛ ներգաղափարախոսական վերադասավորումներին և ներհասարակական ցնցումներին:

1. **Ոգևորության փուլ (2018–2019)**

Հեղափոխությունը բացեց հասարակական հնարավորությունների և փոփոխությունների նոր պատուհան, երբ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները՝ ակտիվիստներ, հետազոտողներ, իրավապաշտպաններ, սկսեցին ներգրավվել պետական կառավարման համակարգում:

> *«Ոգևորությունն այն էր, որ բոլորս, համենայնդեպս ես, ակտիվ ներգրավված էի հեղափոխական գործընթացներում... և մեծ հույս ունեի, որ կգնանք ժողովրդավարության ճանապարհով»:*

Քաղհասարակության ներկայացուցիչ, տղամարդ

Այս ժամանակաշրջանում քաղաքացիական հասարակությունն ընկալվում էր որպես հեղափոխության շարժիչ ուժ, իսկ նրա ներկայացուցիչները՝ իշխանության ներսում որպես համակարգային և ինստիտուցիոնալ փոփոխության առաջամարտիկներ:

2. **Կասկածամտության ու ճգնաժամի փուլ (2019–2020)**

Ժամանակի ընթացքում պարզ դարձավ, որ համակարգը՝ իբրև ինստիտուցիոնալ կառուցվածք, դիմադրում է և ավելին է, քան անհատական ներգործությունը կամ ջանքը:

> *«Հետհեղափոխական ժամանակը structure vs agency մասին էր՝ որքան կարող ես դու ազդել, և որքան են համակարգերը ավելի ուժեղ»:*

Քաղհասարակության ներկայացուցիչ, կին

Կասկածամտությունը խորացավ ոչ միայն համակարգի դիմադրողականության պատճառով, այլև պետական մարմիններում աշխատող նախկին գործընկերների և քաղհասարակության միջև ձևավորվող պատնեշի պատճառով:

3. **Պատերազմի և հիասթափության փուլ (2020–2023)**

Ղարաբաղյան երկրորդ պատերազմը ոչ միայն քաղաքական և անվտանգային առումով էր շոկային, այլև քաղաքացիական հասարակության համար էր «հիասթափության» կուլմինացիա: Ընդ որում՝

հիասթափություն ոչ միայն ներկա իշխանություններից, այլև նախորդող տասնամյակների քաղաքականությունից և քաղաքական հռետորաբանությունից:

> *«2020 թվականը ինձ համար ապամիֆականացում էր գլոբալ առումով: Ամբողջը, ինչով ապրել ենք, փշրվեց աչքի առաջ»:*

Քաղհասարակության ներկայացուցիչ, կին

Այս շրջանում պարզ դարձավ, որ անգամ հեղափոխությունից հետո, հանրային մեծ աջակցության և վստահության հետնախորքում, իշխանությունները չկարողացան արմատական ինստիտուցիոնալ բարեփոխումներ իրականացնել զանազան պատճառներով, բայց հատկապես ի ցույց դնելով հին համակարգի կենսունակությունը ինչպես գործնականում:

4. Սթափության և նորմալիզացման փուլ (2023 – այժմ)

Ղարաբաղի հայերի բռնի տեղահանությունից հետո ընկած ժամանակաշրջանն ընկալվում է իբրև հասարակական և քաղաքական առումներով սթափության կամ նորմալիզացման փուլ, որը բնորոշում է նաև քաղաքացիական հասարակությանը: Նորմալիզացման փուլում հասկացվում է, որ տարբեր շահեր ունեցող մարդիկ չեն կարող միշտ ունենալ մեկ դիրքորոշում: Այս համատեքստում նույնիսկ քաղաքացիական հասարակության ներսում պառակտումը սկսել է ընկալվել որպես բնական երևույթ՝ իբրև բազմակարծության արտահայտում:

Քաղաքացիական հասարակության փոխակերպման առանցքային կետերից է նաև իշխանություն-քաղհասարակություն սահմանների կամ դիսպոզիցիաների լղոզումը: Թավշյա հեղափոխությունից հետո «քաղաքացիական» դերակատարները սկսեցին հայտնվել իշխանության տարբեր օղակներում: Սա ստեղծում է ոչ միայն գործնական, այլև էթիկայի ու հաշվետվողականության խնդիր՝ որտեղ են սկսվում և ավարտվում քաղաքացիական հասարակության գործառույթները:

Բացի այդ՝ այս սահմանների խախտումը բերել է նաև քաղաքական հարվածների՝ ուղղված քաղաքացիական հասարակությանը: Ինչպես նկատում են քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները.

«ՔՀ-ն՝ այն ձևակերպմամբ, որով հավաքվել ենք այս սեղանի շուրջը, քաղաքական պայքարի մաս է դարձել 2018-ից հետո: Իմ կարծիքով, այն 2018 թ-ից հետո, գուցե 2019 թ-ի ինչ-որ պահից սկսած, քաղաքական գործիչների համար դարձել է քաղաքական պայքարի մաս: Հիշենք Սորոսի գրասենյակի դիմաց ցույցերը. «Դուք բերեցիք իշխանության այս մարդուն, այս դավաճանին»»:

Քաղհասարակության ներկայացուցիչ, տղամարդ

Հեղափոխությունից հետո ակնհայտ դարձավ, որ քաղաքացիական հասարակություն լինելը այլևս չի ենթադրում պարզապես ընդդիմադիր կեցվածք: Մինչև 2018 թվականը քաղաքացիական հասարակությունը շատ ավելի բացառող էր. այժմ պետական ինստիտուտների հետ աշխատանքներում բազմաթիվ քաղհասարակության ներկայացուցիչներ են ներգրավված ու համագործակցում են իշխանությունների հետ տարբեր հարցերի առնչությամբ և տարբեր համատեքստերում: Այս համագործակցությունը, բնականաբար, խթանվում է նաև արևմտյան դոնորների կողմից, որոնք հաճախ ֆինանսական աջակցություն տրամադրելով՝ ակնկալում են, որ քաղաքացիական հասարակության կազմակերպությունները ցուցաբերեն հարմարվողականություն՝ ինչպես պետական քաղաքականության, այնպես էլ երկրի ստանձնած միջազգային պարտավորությունների նկատմամբ: Այսպիսով՝ քաղհասարակության դերակատարներն արդեն գործում են թե՛ ներսից՝ պետական ինստիտուտներում, և թե՛ դրսից՝ որպես վերահսկող և հաշվետվողականություն պահանջող դերակատարներ: Այս երկակիությունը նույնպես բերում է ներքին բախումներ և բևեռացում:

Ավելին, համաձայն հետազոտության որոշ մասնակիցների, հեղափոխության հետ կապված պատրանքների փլուզումը հանգեցրել է իրատեսության:

«Սովետական քվազիպետության մոդելը, որ դրվել է 90-ականներից ի վեր, արագ փոփոխության հնարավորություն չուներ»:

Քաղհասարակության ներկայացուցիչ, տղամարդ

Հայաստանյան քաղաքացիական հասարակությունը, հատկապես նրա պրոգրեսիվ հատվածը, վերջին տարիներին անցել է ուժգին ներքին և արտաքին ճգնաժամերի միջով: Այդ ճգնաժամերը ոչ միայն բացահայտեցին քաղաքացիական հասարակության ազդեցության և գործականության սահմանները, այլև հանգեցրին դերակատարների վերադասավորման, սկզբունքների վերանայման և ինքնության կորստի զգացման:

Սակայն այդ անորոշության մեջ քաղաքացիական հասարակությունը փորձում է գտնել իր տեղը, որը հաճախ ուղղակիորեն ազդված է օրվա իշխանությունների օրակարգերից և քաղաքականություններից և սովորաբար մնում է այդ օրակարգերի և քաղաքականությունների սահմաններում: Սա մի տեսակ իրավիճակին հարմարվելու և ստեղծված կոնֆիգուրացիայի պայմաններում գոյատևման նոր ռեժիմ որոնելու մարտավարություն է՝ սեփական նոր՝ ռադիկալ ռազմավարություններ ու օրակարգեր երևակայելու փոխարեն: Քաղաքացիական հասարակության տրանսֆորմացիան, ինչպես քաղաքական հեղափոխությունները, հաճախ ուղեկցվում են երկիմաստությամբ, ռիսկերով և կորուստներով: Սակայն այդ ճանապարհին հայաստանյան քաղաքացիական հասարակությունը կարող է ստանձնել ոչ միայն և ոչ այնքան սոսկ ընդդիմադիրի, այլև միջավայրի և հանրային հարաբերությունների վերակազմակերպող ուժի դեր՝ չնայած սեփական մարտահրավերներին և համընդհանուր անորոշությանը:

ՔԱՂՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԲԵՎԵՌԱՑՄԱՆ ԵՎ ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹՅԱՆ ԴԻՆԱՄԻԿԱՆ

Ժողովրդավարական հասարակություններում քաղաքականությունը երբեք իդեալական «չեզոք» միջավայր չէ: Այն ձևավորում է համերաշխության ու հակասության կոնֆլիկտային դաշտեր, որտեղ որոշումների և կողմնորոշումների շուրջ ձևավորվում են տարբեր «մենք/նրանք» սահմաններ: Այս մոտեցումը հատկապես կարևոր է քաղհասարակության ուսումնասիրության համատեքստում, երբ վերջինս ընկալվում է ոչ միայն իբրև իրավապաշտպան կառույցների ցանց կամ հասարակական նախաձեռնությունների միջավայր, այլև իբրև արժեքային պայքարի, իշխա-

նության, առաքելության և հանրային ներկայացվածության դաշտ:

Ինչպես ընդգծում է ագոնիստական պլյուրալիզմի տեսությունը (Մուֆ, 2024), ժողովրդավարության մեջ հակադրությունը թշնամու և «ախոյանի» միջև ունի հիմնարար տարբերություն: Թշնամին բացառման ենթակա է, մինչդեռ ախոյանը, թեպետ մեզնից տարբերվող, ազատական ժողովրդավարության շրջանակում լեգիտիմ հակառակորդ է: Այս տեսանկյունից դիտարկելով հայաստանյան քաղաքացիական հասարակության դինամիկան՝ պարզ է դառնում, որ 2018-ից հետո ձևավորված նոր իրավիճակում քաղաքականություն իրականացնելու հնարավորությունն ինքնին սկսեց ներքին բևեռացումներ առաջացնել: Քաղաքացիական ընդդիմությունը վերածվեց համակարգի ներսում եղած դերակատարի, ինչն էլ փոխեց ոչ միայն ներհասարակական դիրքավորումները, այլև արժեքային ընդհանրությունների հիմքերը:

Մեր վերլուծական շրջանակը պարզում է քաղաքացիական հասարակության բևեռացման երեք հիմնական առանցք.

1. **2018 թվականի հեղափոխությունը՝** որպես համակարգային փոփոխության հանգուցային պահ: Այն ստեղծեց վերաներկայացվածության նոր պատրանք, բայց այդ վերափոխությունը միաժամանակ փոխեց քաղհասարակության արտաքինից ընդդիմադիր, ներսից համախմբված բնույթը: Բազմաթիվ կազմակերպությունների համար հեղափոխությունը վերածվեց սպասումների հարթակի, որը, երբ չարդարացավ, բերեց ոչ միայն հիասթափություն, այլև բևեռացում նոր իշխանությունների հանդեպ մոտեցման շուրջ:

2. **Ղարաբաղյան երկրորդ պատերազմն ու դրա հետևանքները.** ամենախոր տրավման, որը բացահայտեց ոչ միայն պետական կառավարման անկարողությունը, այլև քաղհասարակության ներսում արժեքային խզումները: Ոմանք պատրաստ չէին ընդունելու պարտված իշխանությունների լեգիտիմությունը, մյուսները փորձում էին վերահիմաստավորել պարտությունը որպես օրինաչափություն՝ ժողովրդավարական, վերահսկելի պետականության բացակայության համատեքստում: Այդ պահին ձևավորվեցին համակեցության նոր սահմանագծեր՝ ոչ թե գաղափարական ընդհանրության, այլ սոլիդար արձագանքի վրա հիմնված:

3. **Դոնորական օրակարգերը և դրանց հարմարվելու հանգամանքը՝**

ստեղծելով ոլորտային մասնատվածություն և մանևրելու անհրաժեշտություն: Տեղական խնդիրները, որոնք կարող են լինել համակարգային, խորքային կամ կոնֆլիկտային, հաճախ դուրս են մնում ուշադրության կենտրոնից, քանի որ գրավիչ չեն դոնորական հանրույթի համար կամ չեն տեղավորվում «ապրանքայնացված» ծրագրային տրամաբանության մեջ: Դոնորական պահանջները՝ կապված հաշվետվողականության, արդյունքների չափման հետ, հաճախ հանգեցնում են ձևականացման: Դրա արդյունքում քաղհասարակության մի զգալի հատված վերածվում է կառավարչական միավորի, այլ ոչ թե քաղաքականապես ներգրավված և հանրային փոփոխության ձգտող ուժի: Ինքնառեֆլեքսիայի բացակայության պայմաններում քաղաքացիական հասարակությունը կորցնում է իր քննադատական դիրքը: Այն դադարում է ինքն իրեն դիտարկելուց որպես իշխանական հարաբերությունների մասնակից կամ վերարտադրող, դադարում է հարցադրելուց, թե ինչ գիտելիք է արտադրում, ինչ լեզվով և ում համար:

Քաղաքացիական հասարակության ներսում տեղի ունեցող քննարկումները ցույց են տալիս, որ բևեռացումը միշտ չէ, որ խոր արժեքային հակադրության հետևանք է: Ակնառու է նաև այն, որ քաղաքական ճնշման փոխարեն հաճախ հարաբերությունների ներքին կոնֆիգուրացիաներն են, մասնավորապես՝ ինքնագրաքննության երևույթը՝ չթիրախավորվելու վախի և ներքին լոյալության սպասումներին համապատասխանելու պատճառով:

> «...*Քաղհասարակության ներսում մենք ինքներս մեզ գրաքննում ենք, որովհետև գիտենք, որ ներսում մի ուժեղ, հզոր խումբ թիրախավորելու է մեզ: Եթե դա նույնիսկ չլինի բացահայտ, դու գիտես, որ ներքին չաթերում, տարբեր հանդիպումների ընթացքում քո talking point-ների մասին պարբերաբար խոսվելու է»:*

Քաղհասարակության ներկայացուցիչ, տղամարդ

Որոշ մարդիկ սա ամփոփում են որպես բազմակարծության հանդեպ քննարկման մշակույթի բացակայություն: Սակայն այստեղ զգալի է ագոնիստական պլյուրալիզմի գործնական դրսևորումը. քաղհասարակության ներսում հակասության առկայությունը բնորոշվում է ոչ թե իբրև թշնամանք, այլ լեգիտիմ հակադրություն, սակայն այդ հակադրությունը

հաճախ մերժվում է որպես անհանդուրժելի կամ անտեսանելի:

Ինչպես ցույց է տալիս մեր հետազոտությունը, պատերազմը, դրա պարտության տրավման և ընդհանուր առմամբ ճգնաժամը հաճախ վերածվել են համախմբման հնարավորության: Մեծ թվով կազմակերպություններ արձագանքել են տեղահանության խնդրին, մոբիլիզացվել են՝ չնայած իրենց մեթոդաբանական կամ գաղափարական տարբերություններին: Սա վկայում է այն մասին, որ սոլիդարության ձևերը հաճախ լինում են բովանդակային առաքելության, այլ ոչ թե կարծիքի համադրման արդյունք:

Բևեռացման սոցիոհոգեբանական չափումը (Prooijen, 2021) ընդգծում է, որ տեղեկատվական միջավայրի վերափոխումը՝ հույզերի, վախերի և ակնկալիքների միջոցով, խորացնում է խմբային հակադրությունը: Տարաբնույթ տեղեկատվության նկատմամբ ռացիոնալ ընկալումը փոխարինվում է ընտրողական, երբեմն՝ ինստինկտիվ արձագանքով, ինչը մանիպուլյատիվ հաղորդակցության՝ ապատեղեկատվության, սադրանքի և ցինիկ մեկնաբանությունների հիմք է դառնում: Սա վկայում է հոգնածության, էմոցիոնալ հյուծվածության, քաղաքականություն ձևավորելու անկարողության և ռեակտիվ հոգեբանական դրության մասին:

> «...*Երբ նայում եմ Facebook-ը և մեդիան, ինձ թվում է՝ արժեզրկման քաղաքականությունը ամենաշատն է. ամեն ինչը ծաղրվում է»:*

Քաղհասարակության ներկայացուցիչ, կին

Քաղհասարակության դաշտի ներսում առկա է նաև լուրջ հակասություն իդեալների և քաղաքական ռեալիզմի միջև. հաճախ քաղհասարակության սպասելիքները չեն համապատասխանում ոչ հանրային տրամադրություններին, ոչ պետության հնարավորություններին: Սա առաջացնում է ներքին բախումներ հատկապես ֆինանսավորման խնդիրների, ռազմավարական դիրքավորման և հանրության հետ կապի հարցերում: Սակայն ճգնաժամերը միաժամանակ վերաիմաստավորման հնարավորություն են: Արտաքին ֆինանսավորման կրճատումը թերևս քաղհասարակությանը ստիպում է վերադառնալ հիմնարար հարցերին՝ ո՞վ ենք մենք, ի՞նչ ենք պաշտպանում, և որքա՞ն ջանք ու ռեսուրս կարող ենք ներդնել մեր պայքարներում:

Քաղաքացիական հասարակության բևեռացումը միայն պառակտում

չէ. այն ժամանակակից ժողովրդավարության անբաժան մասն է, որը ցույց է տալիս ինչպես գաղափարական բազմազանությունը, այնպես էլ հասարակական արձագանքի մոբիլիզացման կարողությունը: Ժողովրդավարական համակարգում կարևորվում է ոչ թե համաձայնությունը, այլ հակադրության ձևի լեգիտիմությունը: Քաղհասարակության բևեռացումը, որքան էլ ցավոտ կամ խանգարող թվա, պարունակում է աճի, վերաիմաստավորման և ինքնաճանաչման հնարավորություն՝ պայմանով, որ քննարկման մշակույթը զարգանա, ոչ թե փոխարինվի լռությամբ, ինքնագրաքննությամբ կամ արժեզրկմամբ:

Քաղաքացիական հասարակության դաշտը, այսպիսով, կանգնած է ընտրության առջև՝ վերածվել գաղափարների և նախաձեռնությունների քննարկման ու առողջ մրցակցության հարթակի, թե միմյանց բացառող ճամբարների: Ագոնիստական ժողովրդավարության տրամաբանությունը հուշում է, որ ժողովրդավարության առաջնային անելիքը կրքերի վերացումը չէ հանրային ոլորտից, որպեսզի ռացիոնալ փոխհամաձայնությունը դառնա հնարավոր, այլ կրքերի ուղղորդումը դեպի արմատական ժողովրդավարական ծրագրեր (Մուֆ, 2024):

ԱԿՏԻՎԻԶՄԻ «ՃԳՆԱԺԱՄԻ» ՇՈՒՐՋ ՄՏՈՐՈՒՄՆԵՐ ԵՎ ՊԱՅՔԱՐԻ ՆՈՐ ՁԵՎԵՐԻ ՈՐՈՆՈՒՄ

Հայաստանում ակտիվիզմի, քաղաքացիական ակտիվության և մասնակցության մասին խոսելիս անհրաժեշտ է անդրադառնալ պատմությանը և հիշել 2007 թվականին ձևավորված «Թեղուտի պաշտպանության քաղաքացիական նախաձեռնությունը»[9] որպես արմատաբուխ քաղաքացիական շարժման խորհրդանշական օրինակ և արդի ակտիվիզմի կարևոր ելակետ:

Թեղուտի պղնձամոլիբդենային հանքավայրի շահագործման դեմ մղված պայքարը, ինչպես նաև նախաձեռնող խմբի ձևավորման պատմությունն ու գործունեությունը կարելի է դիտարկել որպես Հայաստանում բնապահ-

9 Ecolur.com. (2008, հունվարի 21). *Թեղուտի անտառի պաշտպանները պահանջում են դադարեցնել հանքավայրի շահագործումը*. Ecolur. վերցվել է՝ https://www.ecolur.org/hy/news/teghout/34/

պանական շարժման ձևավորման, ակտիվիստական փորձառության և քաղաքական ինքնագիտակցության ձևավորման շրջադարձային փուլ: Այս շարժումը ոչ միայն խորհրդանշեց բնապահպանական արդարության համար մղվող պայքարը, այլև դարձավ քաղաքացիական դիմադրության և ինքնակազմակերպման օրինակ, որը հետագայում ներշնչեց մի շարք այլ նախաձեռնությունների: Թեղուտի պայքարը միաժամանակ ամփոփում և սիմվոլիկ կերպով ներկայացնում է Հայաստանում հանքարդյունաբերության շուրջ ծագած հիմնական հակասություններն ու մտահոգությունները (Իշխանյան, 2013):

Թեղուտի նախաձեռնությունից հետո Հայաստանում ձևավորվեցին մի շարք այլ ակտիվիստական շարժումներ և քաղաքացիական խմբեր՝ ուղղված բնապահպանական, սոցիալական և քաղաքային խնդիրների լուծմանը: Այս շարժումներն ու նախաձեռնությունները շարունակեցին ընդլայնել քաղաքացիական մասնակցության դաշտը՝ խորացնելով ժողովրդավարության հիմքերը:

Նայելով հետ՝ կարող ենք արձանագրել, որ Հայաստանի քաղաքացիական հասարակության կայացման գործընթացի հիմքում մեծապես ընկած են բնապահպանական պայքարներն ու հանրային տարածքների պահպանման շուրջ ծագած բանավեճերը[10]: Այս զարգացումները փոխկապակցվում են նաև 1990-ականների խաղաղաշինական ջանքերի հետ, երբ պատերազմից հետո ձևավորված անհատական ակտիվությամբ պայմանավորված՝ առաջ եկան առաջին քաղաքացիների, հասարակական խմբերի և շարժումների խաղաղարար նախաձեռնությունները: Դրանք էլ իրենց հերթին նախադրյալներ ստեղծեցին հետագա տարիների ակտիվիզմի համար՝ անցում ապահովելով անհատական նախաձեռնություններից դեպի համակարգված քաղաքացիական շարժումներ:

Հայաստանում քաղաքացիական պայքարի և ակտիվիզմի մեթոդները մշտապես բազմազան են եղել՝ հանրային միջոցառումներից, կոչերից, մանիֆեստներից և պետական մարմիններին ուղղված դիմումներից մինչև փողոցային պայքարի տարբեր ձևեր՝ բողոքի ակցիաներ, հանրահավաքներ, նստացույցեր, ստորագրահավաքներ և հաղորդակցման այլ եղանակներ: Այդ պայքարի բաղկացուցիչ տարրերից էր նաև արվեստը՝

10 Թեղուտի պայքարին հաջորդեցին 2011 թ. «Փրկենք Թռչկանի ջրվեժը», 2012 թ. «Մաշտոցի պուրակի» շարժումները: Քաղաքացիական ակտիվիզմի տեսանկյունից անկյունաքարային է նաև 2013 թվականից մինչ օրս շարունակվող «Ամուլսարի պայքարը»:

որպես սոցիալ-քաղաքական դիրքորոշումները մանիֆեստացնելու և դիմադրության մշակույթը ձևավորելու միջոց:

Ակտիվիստական շարժումները Հայաստանում ժամանակի ընթացքում ձևակերպեցին պայքարի հստակ մեթոդաբանություն՝ գաղափարական հենքով և քաղաքացիական ու քաղաքական հստակ պահանջներով: Այս պահանջները հիմնականում ուղղված էին համակարգային անարդարությունների, կոռուպցիայի, հանքարդյունաբերության, բնության և տնտեսական շահագործման դեմ: Պայքարի հիմնական սուբյեկտները՝ արմատաբուխ խմբերը, անհատ ակտիվիստները, երիտասարդական նախաձեռնությունները և բնապահպանական կազմակերպությունները, ձևավորեցին ինքնակազմակերպվող քաղաքացիական հարթակներ, որոնք նպատակ ունեին ոչ միայն առանձին խնդիրներ բարձրաձայնելու, այլև հասնելու կառուցվածքային փոփոխությունների:

Այս շարժումներն ու պայքարի ձևերը տարիների ընթացքում ձևավորեցին գործականության զգացում համակիրների և մասնակիցների շրջանում՝ խորացնելով քաղաքական ներգրավվածությունը և նպաստելով քաղաքացիական հասարակության հասունացմանը (Սոցիոսկոպ, 2016): Կուտակված փորձառությունն ու անօրինականության հանդեպ անհանդուրժողականությունը հնարավոր դարձրին հասարակական կազմակերպությունների, իրավապաշտպանների և ակտիվիստների առանցքային դերը 2018 թվականի Թավշյա հեղափոխության ժամանակ:

2018 թվականի գարնան հեղափոխական գործընթացը նոր էջ բացեց քաղաքացիական պայքարի պատմության մեջ՝ ներմուծելով պայքարի նոր մեթոդներ, որոնք նախկինում հազվադեպ էին կիրառվում: Դրանք ներառում էին ապակենտրոնացված պայքարի մոդելները՝ միաժամանակ գործողություններ Երևանում և մարզերում, փողոցների և մայրուղիների փակում, պետական կառույցների շրջափակում, զանգվածային ինքնակազմակերպում, դասադուլներ, գործադուլներ և նոր մոբիլիզացիոն մեխանիզմներ:

Տեղեկատվության տարածման մեդիա գործիքակազմն այս փուլում նույնպես էական վերափոխման ենթարկվեց: Սոցիալական մեդիան, մասնավորապես Facebook-ը, վերածվեց ոչ միայն կազմակերպման հարթակի, այլև հեղափոխության առանցքային տեղեկատվական աղբյուրի: Մոբիլիզացիայի ձևերը, բողոքի գաղափարական շրջանակումը, շարժ-

մանը մասնակցելու հանձնառության (հեղափոխական ինքնության) կառուցակցման ներուժը նպաստեցին հեղափոխության կայացմանը, և առաջադիմական քաղաքացիական հասարակության խմբերը դարձան հեղափոխության ավանգարդը՝ ներշնչման աղբյուր դառնալով առավել լայն հանրային խմբերի համար՝ ժողովրդականացնելով դիմադրության տարբեր մեխանիզմներ և մեթոդներ (Սոցիոսկոպ, 2018):

Թավշյա հեղափոխությունից հետո քաղաքացիական ակտիվիզմի ձևերի և պայքարի մեթոդաբանության փոփոխության մասին խոսակցությունը դարձավ անխուսափելի: Հնարավոր չէր ակնկալել, որ քաղաքական ռեժիմի փոփոխությունից հետո քաղաքացիական բողոքը կշարունակվեր նույն ինտենսիվությամբ և դինամիկայով, հատկապես այն պայմաններում, երբ լայն կոնսենսուս կար Հայաստանի հետագա զարգացումը ժողովրդավարության ուղիով տեսնելու և կերտելու հարցում: Սակայն, ինչպես հաճախ է պատահում նման անցումային փուլերում, քաղաքական ակնկալիքների ու իրական փոփոխությունների միջև առաջացան խզումներ՝ հանգեցնելով հիասթափությունների: Դեռևս հեղափոխությունից կարճ ժամանակ անց պարզ դարձավ, որ ակնկալվող բարեփոխումները բախվում են կառուցվածքային և համակարգային դիմակայության, պոպուլիզմի ու քաղաքական ինֆանտիլիզմի պատնեշներին:

Այդուհանդերձ, պնդումը, թե հեղափոխությունից հետո քաղաքացիական հասարակությունը դադարեց պայքարելուց, իրականությանը չի համապատասխանում: Ակտիվիզմը պարզապես անցավ նոր փուլ՝ վերաձևակերպվելով՝ արձագանքելու նոր իրողություններին: Այս համատեքստում առանձնահատուկ կարևորություն է ստանում Ամուլսարի պայքարը, որը վերստին ընդգծեց քաղաքացիական պայքարի շարունակական բնույթը և դիմադրության վերակազմակերպման կարողությունը:

Ամուլսարի հանքի շահագործման դեմ պայքարը սկսվել էր դեռևս 2013 թվականին, սակայն 2018-ի գարնանը՝ Թավշյա հեղափոխությունից հետո, այն նոր թափ ստացավ: Հեղափոխությունը ստեղծեց նոր հնարավորություններ մի կողմից՝ մոբիլիզացված տեղական համայնքների և բնապահպան ակտիվիստների համար, մյուս կողմից՝ պայքարի օրակարգը պետական բարձր մակարդակում քննարկելու համար: Բազմաթիվ ակտիվիստներ և շարժման մասնակիցներ հավատում էին, որ նախկին կոռումպացված համակարգի դեմ հաջողությամբ իրականացված հեղա-

փոխությունը ճանապարհ կհարթի արդարության վերականգնման և բնապահպանական իրավունքի հաղթանակի համար:

Սակայն իրականությունն ավելի բարդ էր: Թեպետ որոշ ժամանակ համագործակցության փորձեր արվեցին կառավարող շրջանակների և շարժման մասնակիցների միջև, Ամուլսարի հարցում իշխանությունների երկմտանքը, անորոշությունը և որոշումների կայացման ձգձգումները բացահայտեցին հեղափոխական իշխանության սահմանափակումները: Ամուլսարի պայքարը դարձավ հեղափոխությունից հետո քաղաքացիական հասարակության և իշխանությունների միջև առաջին մեծ բախման կետերից մեկը՝ ընդգծելով ոչ միայն քաղաքական կամքի պակասը, այլև տեղի և միջազգային նեոլիբերալ քաղաքականության հեգեմոնիան:

Թեև հեղափոխությունից անցել է արդեն յոթ տարի, Ամուլսարի պայքարը շարունակում է մնալ կենդանի: Ակտիվիստները շարունակում են հետևողականորեն բարձրաձայնել խնդրի շուրջ՝ թե՛ ներսում, թե՛ միջազգային հարթակներում: Նրանք անցնում են հանրային մասնակցության դեմ ռազմավարական հայցերով (SLAPP) և դատական գործընթացներով[11]:

Թավշյա հեղափոխությունը նոր հնարավորություններ ստեղծեց իշխող ուժի և քաղաքացիական հասարակության համագործակցության և տարբեր ոլորտներում բարեփոխումներին ուղղված քաղաքականությունների մշակման գործում համատեղ աշխատանքի համար, բայց նաև ստեղծված նոր պայմաններում քաղհասարակության տեղի ու դերի վերամտածման պատճառ դարձավ: Հեղափոխության արդյունքում ձևավորված նոր քաղաքական միջավայրն առաջ բերեց հանրային-քաղաքական մասնակցության նոր մակարդակ՝ հատկապես բարեփոխումների օրակարգի մշակման և իրականացման գործընթացում: Քաղաքացիական հասարակությունը, որը մինչ այդ հիմնականում հանդես էր գալիս որպես վերահսկող և հաճախ ընդդիմադիր ուժ, այժմ ստացավ նաև գործընկերային դերակատարության հնարավորություն:

Այդուհանդերձ, նոր իրավիճակը առաջացրեց նաև մի շարք մարտահրավերներ: Քաղհասարակության՝ որպես իշխանության հաշվետվողականության ապահովման առանցքային ինստիտուտի դերը հաճախ բախվեց իր նոր՝ համագործակցային կարգավիճակին: Այս համատեքս-

11 Ղարիբյան, S. (2024). *Հանրային մասնակցության դեմ ռազմավարական հայցերը Հայաստանում.* Մարդու իրավունքների տուն, Երևան. https://hrhyerevan.org/wp-content/uploads/2025/01/SLAPPs-report-2025.pdf

տում արդիական դարձավ հարցը՝ ինչպես համադրել քննադատողի և բարեփոխումներին աջակցողի դերը՝ չկորցնելով անկախությունը և սկզբունքայնությունը:

Այսպիսով՝ Թավշյա հեղափոխությունը միաժամանակ ստեղծեց և՛ նոր հնարավորություններ համագործակցության համար, և՛ անհրաժեշտություն՝ վերահիմաստավորելու քաղաքացիական հասարակության ինքնության, առաքելության ու գործելակերպի հիմքերը նոր քաղաքական իրականության պայմաններում:

Ստեղծված նոր քաղաքական համատեքստի խորքային գիտակցումն էական է քաղհասարակության պասիվացման կամ ակտիվիզմի «ճգնաժամի» հարցը քննարկելիս: Տարիների ընթացքում կուտակված պայքարի փորձառությունը և գործիքակազմը, ինչպես նաև լեզուն և բառապաշարը հեղափոխությունից հետո յուրացվել են քաղաքական կոնկրետ շահեր հետապնդող ընդդիմադիր ուժերի և դրանց քաղաքական օրակարգերն առաջ մղող լրատվամիջոցների կողմից: Քաղաքացիական հասարակության լեզուն, որը մի ժամանակ ծառայում էր ավտորիտար համակարգի դեմ պայքարի համար, այժմ օգտագործվում է նախկին իշխանությունների առաջնորդությամբ գործող ընդդիմության և նրան հարող մեդիայի կողմից՝ իշխանություններին քննադատելու և նույն այդ քաղաքացիական հասարակությանը թիրախավորելու համար: Նախկինում՝ հեղափոխությունից առաջ, քաղաքացիական հասարակությունը որոշակիորեն համադրում էր նաև ընդդիմադիր դերը՝ հանդես գալով որպես հանրային արդարության և ժողովրդավարության պահանջ ներկայացնող ուժ: Սակայն ներկայիս բարդ համատեքստում քաղաքական ընդդիմության հետ նույն հարթության վրա հայտնվելը՝ հատկապես նախկին համակարգի ներկայացուցիչների առաջնորդությամբ, ընկալվում է որպես քաղաքական ու արժեհամակարգային հակասություն, և քաղհասարակության համար նման դիրքավորումներն անընդունելի են: Այստեղ պետք է առանձնացնել նաև պայքարի ձևերի փոփոխման երևույթը: Դրա պատճառները բազմաշերտ են՝ քաղաքացիական հասարակության որոշակի հոգնածություն՝ տարիների անընդմեջ պայքարից հետո, սերնդափոխության բացակայություն, որը սահմանափակում է նոր մոտեցումների ու ռազմավարությունների ներմուծումը, ինչպես նաև որոշ խմբերի շրջանում առկա «փոփոխությունների սպասման» տրամադրությունը: Բացի այդ՝ տարածված է նաև այն զգացողությունը, թե «պայքարի նոր գործիքներ ձևավորե-

լու ժամանակ ռեսուրսներ և ներշնչում այլևս չկան», ինչը որոշ դեպքերում հանգեցնում է ներփակման:

> *«Նույն խմբի ներսում կարծիքները շատ տարբեր էին, կոնֆլիկտներ շատ կային, բայց որոշակի կազմակերպվածություն կար, ու մարդիկ կային: Հիմա այդ մարդիկ չկան, և նոր սերունդ էլ չկա, որ գա ու միանա ինչ-որ գաղափարական բանների: Իմ կարծիքով մենք դեռ նոր մեթոդներ մշակելու խնդիր ունենք, նոր գործիքներ ստեղծելու խնդիր ունենք, և ակտիվիզմի ձևը, իմ կարծիքով, ընդհանրապես փոխվել է կամ չկա»:*

Քաղհասարակության ներկայացուցիչ, կին

Հայաստանյան ակտիվիզմի շուրջ շարունակվող քննարկումներից մեկը վերաբերում է «մեթոդի լինել կամ չլինելուն»՝ հատկապես երկարաժամկետ ռազմավարությունների ձևավորման տեսանկյունից: Տարածված է այն ընկալումը, որ տեղական ակտիվիզմը մշտապես պայքարել է «մեթոդաբանական թուլության» կամ համակարգված մոտեցումների բացակայության պայմաններում: Այդ միտքը ժամանակ առ ժամանակ վերաշեշտվում է քաղաքացիական հասարակության ներսում՝ որպես կազմակերպված և նպատակային գործողությունների պակասի անդրադարձ:

Քաղաքացիական հասարակության տարբեր ներկայացուցիչներ նշում են, որ մինչև Թավշյա հեղափոխությունը պայքարի տարբեր ձևերի և գաղափարական տարաբնույթ հարթակների միջև առկա հակասությունները, կոնֆլիկտներն ու տարաձայնությունները չէին խանգարում, որ ձևավորվի ընդհանուր նպատակի շուրջ համախմբում: Այդ շարժումներն ի վերջո միտված էին տարածք ստեղծելուն, լսելի դառնալուն և, ամենակարևորը, կազմակերպված պայքարի միջոցով հանրային պահանջները քաղաքական դաշտ տեղափոխելուն:

Սակայն հետհեղափոխական զարգացումները՝ հատկապես Ղարաբաղյան երկրորդ պատերազմը և դրա հետևանքները, հանգեցրին ոչ միայն քաղաքական օրակարգերի վերաձևման, այլև կտրուկ տեղաշարժերի՝ պայքարի մեթոդների ու համախմբման ձևերի հարցում: Ներկայում հաճախ է շեշտվում այն դիտարկումը, որ քաղհասարակությունն ունի ոչ միայն մեթոդաբանական ճգնաժամ, այլև սկզբունքայնության և ներքին

բազմակարծությունը կառավարելու խնդիր: Մասնավորապես, որոշ դիտարկումների համաձայն՝ երբեմն առկա է նույնիսկ բազմակարծության հանդուրժողականության պակաս, ինչն էլ խորացնում է բևեռացվածության ռիսկը:

Այս համատեքստում հետազոտության մասնակիցների համար քաղաքացիական հասարակության մեթոդաբանական անկայունությունը դիտարկվում է ոչ թե որպես զուտ գործիքային խնդիր, այլ խորքային՝ արժեքային և կառուցվածքային մարտահրավեր: Նրանք այն կապում են միաժամանակ կազմակերպվածության, ներքին երկխոսության ունակության և միասնականության ձևավորման ընդունակության հետ: Քաղաքացիական հասարակության՝ որպես բազմաշերտ և բազմահուն կառույցի համախմբման ունակությունը հղի է ինչպես ներքին, այնպես էլ արտաքին մարտահրավերներով, որոնց հաղթահարումը պայմանավորում է ոչ միայն ակտիվիզմի արդյունավետությունը, այլև դրա երկարաժամկետ կենսունակությունը:

Քաղաքացիական հասարակության ակտիվիստական մեթոդների փոխակերպման հարցը հետհեղափոխական Հայաստանի քաղաքական զարգացումների համատեքստում դիտարկվում է որպես ոչ միայն ռազմավարական ադապտացիայի արդյունք, այլև համակարգային փոփոխությունների տրամաբանական շարունակություն: Հետազոտության մասնակիցների գնահատմամբ՝ պայքարի մեթոդների վերաձևումը պայմանավորված է, նախ և առաջ, հեղափոխությունից հետո իշխանության եկած նոր քաղաքական ուժի և քաղաքացիական հասարակության միջև համագործակցության հնարավորության ձևավորմամբ: Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներից շատերը ներգրավվել են կառավարությունում կամ այլ որոշում կայացնող մարմիններում՝ իրենց փորձառությունն ուղղելով պետական բարեփոխումների մշակմանն ու իրականացմանը ուղեկցող գործընթացներին:

Այսպիսի ներգրավվածությունը, ըստ որոշ դիտարկումների, էապես փոխել է ավանդական «պայքարող» քաղաքացիական հասարակության գործելակերպը: Այժմ խնդիրների առաջմղումն ու փոփոխությունների հասնելը կատարվում են ոչ թե բացառապես հրապարակային ճնշման կամ ցույցերի մեթոդներով, այլ ներգրավվածության միջոցով՝ օրենսդրական գործընթացներում, կրթական բովանդակության ձևավորման, քա-

ղաքականությունների մշակման մեջ և հանրային ծառայությունների բարեփոխման նախաձեռնություններում: Մյուս կողմից, սակայն, բաց հարց է մնում, թե պայքարի այս ավելի ինստիտուցիոնալացված ձևերը որքանով են իրականում արդյունավետ՝ հատկապես այն ոլորտներում, որոնք պահանջում են խորքային և երբեմն՝ ռադիկալ լուծումներ: Խոսքը հատկապես այնպիսի ոլորտների մասին է, ինչպիսիք են բնապահպանությունը, սոցիալական արդարությունը և աղքատության դեմ համակարգային պայքարը կամ սեռականության ու գենդերային ինքնության շուրջ ձևավորված զգայուն հարցերը: Այս թեմաները հաճախ դուրս են մնում պետության և միջազգային գործընկերների համար հարմար օրակարգերից, ուստի ինստիտուցիոնալ մոտեցումների սահմաններում դրանց հասցեագրումը հիմնականում ձախողվում է: Արդյունքում, առաջանում է երկվություն՝ մի կողմից ֆինանսավորման պայմանական կայունություն և քաղաքականության մասնակցային բնույթ, մյուս կողմից՝ հնարավորության սահմանափակում՝ արմատական կամ ոչ կոնվենցիոնալ ձևերով հանդես գալու համար:

Այս ֆոնին ձևավորվում է նոր՝ առավել ինստիտուցիոնալացված ակտիվիզմ, որի նպատակները կարող են նույնը մնալ, սակայն գործիքակազմն ու արտահայտման եղանակները տարբերվում են նախահեղափոխական շրջանի փողոցային պայքարի հրապարակային մեթոդներից: Հետազոտության մասնակիցները նկատում են նաև, որ նոր ձևավորված ակտիվիզմը հաճախ «ավելի նեղ և մասնագիտական շրջանակների» ներսում է ընթանում, ինչը բարդացնում է դրա հանրային ընկալելիությունը: Այսինքն՝ ակտիվիզմն ինքնին շարունակվում է, բայց այն դարձել է ավելի պակաս տեսանելի լայն հանրության և հատկապես զանգվածային մեդիայի դիտանկյունից:

Այս կերպ՝ ակտիվիզմի ներկայիս ձևերը դուրս են գալիս պայքարի պարզ վերագրումներից և վերաձևակերպվում որպես մասնակցային քաղաքականության գործիք՝ միաժամանակ առաջ բերելով մի շարք հիմնարար հարցեր. արդյոք այս ձևափոխված ակտիվիզմը կարող է պահպանել իր սկզբունքայնությունն ու հանրային ազդեցությունը, և որքանով է այն հասանելի ու ներկայացուցչական այն խմբերի համար, որոնք նախկինում եղել են քաղաքացիական շարժումների հիմնական շարժիչ ուժերը:

«Մի քանի քննարկումների մասնակցել եմ, ու երևի չորս անգամ լսել եմ, թե ինչի եք բողոքում, որ ակտիվիզմ չկա, ակտիվիզմ շատ լավ էլ կա, պարզապես փոխել է իր ձևը, ու այսօրվա drag show-ները ակտիվիզմի նոր ձևն են: ...Ակտիվիզմի ձևերը փոխվում են, բայց փոխվում ու գնում են underground»:

Քաղհասարակության ներկայացուցիչ, տղամարդ

Սակայն արդյոք ակտիվիզմի այս ձևափոխված, ինստիտուցիոնալացված կամ ընդհակառակը՝ ընդհատակյա դրսևորումները լայնորեն ընկալվո՞ւմ են որպես քաղհասարակության դիրքավորման, տարածքի և գործելակերպի բնական զարգացում Թավշյա հեղափոխությունից հետո: Հարցը մնում է բաց, և հենց սա է, որ վերհանում է քաղհասարակության ներսում առկա խոր բևեռացվածությունը: Ակնհայտ է, որ բոլորի համար նոր գործելակերպը միանման չի ընկալվում. մի կողմից՝ այն դիտվում է որպես հնարավորությունների ընդլայնում, մյուս կողմից՝ որպես դիմադրողականության թուլացում և անկախության վտանգ:

Ակտիվիզմի ինստիտուցիոնալացված տարբերակները՝ ներգրավվածությունը քաղաքականությունների մշակման, օրենսդրական գործընթացների կամ պետական բարեփոխումների հարթակներում, շատ դեպքերում մնում են անհասանելի և քիչ տեսանելի այն լայն շերտերի համար, որոնք նախկինում քաղաքացիական շարժումների ակտիվ մասնակիցն էին: Սա երբեմն ընկալվում է ոչ թե որպես տարածքի ընդլայնում, այլ որպես որոշակի սահմանափակման գործընթաց: Հետևաբար հարցը ոչ միայն մեթոդների փոփոխության, այլև դրանց ըմբռնման տարբերությունների մեջ է:

Այս համատեքստում կարևոր է նաև անդրադառնալ անհատական վերապրումների և ինքնափոխակերպման հարցին: Հետազոտության մասնակիցները հաճախ խոսում են այն մասին, որ վերջին տարիների իրադարձությունները՝ Թավշյա հեղափոխությունը, Ղարաբաղյան երկրորդ պատերազմը և դրանց սոցիալ-հոգեբանական հետևանքները, ձևավորել են նոր անհատական դիրքավորում՝ ինչպես քաղաքացիական դերակատարման, այնպես էլ հասարակական երևույթներին արձագանքելու տեսանկյունից:

«Անհատական փոփոխություն» հասկացությունը տարբեր մեկնաբանություններ է ստանում. մեկը դա տեսնում է որպես քաղաքական անհա-

մաձայնությունների հանդուրժողականության ընդլայնում, մյուսը՝ հակառակը՝ հոգնածության, նահանջի կամ ինքնամեկուսացման դրսևորում: Տարբերվում են նաև մեխանիզմները, որոնցով մարդիկ արձագանքում են հանրային զարգացումներին՝ երբեմն հեռանալով հրապարակային հարթակներից, երբեմն ավելի խորքային, բայց պակաս տեսանելի մասնակցություն ցուցաբերելով մասնագիտական կամ համայնքային հարթակներում:

Բոլոր այս փոփոխությունները հետազոտության մասնակիցները դիտարկում են որպես բնական ընթացք՝ պայմանավորված քաղաքական և սոցիալական ցնցումներով: Սակայն այդ բնականությունը, ըստ նրանց, չպետք է դառնա ինքնաբավ բացատրություն կամ հիմնավորում ոչինչ չփոխելու համար: Ընդհակառակը՝ այդ փոփոխությունները պետք է դառնան նոր տարածքներ ստեղծելու, նոր եղանակներով մտածելու և գործելու խթան: Այս առումով, մեթոդների փոխակերպումը դիտարկվում է ոչ թե որպես ավարտուն կամ կայացած գործընթաց, այլ որպես շարժում մշտական վերաիմաստավորման, վերագնահատման և նոր հնարավորությունների բացման ուղղությամբ:

Ակտիվիզմի վերափոխումը տեղի է ունենում ոչ միայն որպես ինստիտուցիոնալ կամ կառուցվածքային շարժ, այլև որպես անձնական վերաիմաստավորում ինքնության, դերի ու գործելակերպի մակարդակում: Հետազոտության մասնակիցները այս փոփոխությունը չեն դիտարկում միայն ռեակցիա կամ նահանջ նախկին մարտական ու հրապարակային դիրքերից, այլ հակառակը՝ որպես նոր փուլ, որտեղ անհատը փորձում է ազդեցություն ունենալ այլ հարթակներում, նոր գործիքներով և նոր լեզվով:

Այս փոփոխությունը հնարավոր է բնութագրել որպես անցում, որտեղ պայքարը դադարում է բացառապես աղմկոտ ու տեսանելի ակցիաների հետ ասոցացվելուց և սկսում է արտահայտվել քաղաքական գործընթացներում, կրթական ծրագրերում, իրավական բարեփոխումներում, մշակութային միջամտություններում և այլ՝ հաճախ պակաս տեսանելի, բայց ոչ պակաս ազդեցիկ հարթակներում:

Այս առումով, մեթոդների վերափոխումը դառնում է փոփոխություն՝ ազդեցություն գործելու հնարավորությունը առավել իրատեսական դարձնելու նպատակով: Դա նաև փորձ է պայքարի և մասնակցության առավել կա-

յուն և ազդեցիկ մոդելներ ձևավորելու համար՝ հաշվի առնելով թե՛ քաղաքական միջավայրի փոփոխությունը, թե՛ ներհասարակական պահանջները: Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների զգալի մասը հենց այսպիսի վերափոխումները դիտարկում է դրական լույսի ներքո՝ որպես աճի և հասունացման նշան:

Սա չի նշանակում, թե նախկին մեթոդները կորցրել են արդիականությունը, այլ մատնանշում է, որ ակտիվիզմը միատարր գործընթաց չէ, այլ փոփոխական և բազմամակարդակ գործողություն, որը պետք է կարողանա արձագանքել ժամանակի և իրադրությունների փոփոխություններին: Ընդ որում՝ այստեղ խոսքը պայքարի դինամիկ ձևերի մասին է, որոնք կարող են միաժամանակ լինել թե՛ բարձրաձայն, թե՛ լուռ, թե՛ հանրային, թե՛ խորքային ներգրավվածության տեսքով:

> ***«...ես անընդհատ ինձնով էի պատկերացնում. անհատապես ես ինչո՞վ եմ փոխվել: Ու ես մտածում եմ, որ հիմա իմ դիրքորոշումը ավելի դրական է հենց նաև այն պատճառով, որ ես մտածում եմ, որ այն ոլորտներում, որտեղ ես կարևոր էի համարում ազդեցություն ունենալը, ես շատ փոխվել եմ»:***

Քաղհասարակության ներկայացուցիչ, կին

Քաղաքացիական հասարակության և ակտիվիզմի մեթոդների վերաբերյալ քննադատությունների մի մասն ուղղված է դրա աճող ինստիտուցիոնալացմանը կամ, ինչպես ընդունված է ասել, «ՀԿ-ացմանը»: Այս փոփոխությունը մեկնաբանվում է որպես այնպիսի զարգացում, որի արդյունքում մեթոդաբանական բազմազանությունն ու պայքարի ստեղծագործական դինամիկան աստիճանաբար փոխարինվում են ծրագրայնությամբ, ինդիկատորային մտածողությամբ և արդյունքակենտրոն գործունեությամբ:

> ***«Մեթոդաբանությունը դարձել է ավելի ստերիլ, ավելի ծրագրային, ավելի ինդիկատորներով ու կոնկրետ արդյունքներով պայմանավորված»:***

Քաղհասարակության ներկայացուցիչ, տղամարդ

Այս դիտարկումները չեն սահմանափակվում միայն հայաստանյան համատեքստով: Քաղհասարակության «ՀԿ-ացման» շուրջ քննադատությունը լայնորեն շրջանառվում է ինչպես տեղական, այնպես էլ միջազգային

դիսկուրսում: Համաձայն բազմաթիվ քննադատական ուսումնասիրությունների՝ արտաքին ֆինանսավորմամբ ծրագրային գործունեությունը հաճախ հեռացնում է քաղաքացիական հասարակությանը հասարակության լայն խմբերից՝ թուլացնելով երկարաժամկետ պայքարի ներուժն ու դրա արմատաբուխ հիմքերը (Lang, 2013; Fisher, 2006, Hearn, 1998):

Դրամաշնորհային ֆինանսավորման կարճաժամկետ տրամաբանությունը ոչ միայն ստիպում է կազմակերպություններին մշտապես կենտրոնանալ նոր ռեսուրսների որոնման վրա, այլև շեղում է նրանց ռազմավարական ուշադրությունը՝ սոցիալական արդարության, մարդու իրավունքների, հավասարության երկարատև և արժեքային պայքարից դեպի դոնորային շրջանակներով սահմանված ծրագրային մեխանիզմներ: Արդյունքում, որոշ կազմակերպություններ ավելի շատ հաշվետու են դառնում դոնորներին, քան տեղական շահառուներին՝ հաճախ չունենալով սեփական մշակված օրակարգ կամ կորցնելով կապը հասարակության այն շերտերի հետ, որոնց շահերը փորձում էին ներկայացնել: Քաղաքացիական շարժումները, ենթարկվելով դոնորային պահանջներին, դառնում են առավել մասնագիտացած, արդյունքակենտրոն և բյուրոկրատական, ինչն էապես նվազեցնում է դրանց մասնակցային բնույթը: Այս անցումը, ըստ Լանգի, վերափոխում է ակտիվիզմը արմատաբուխ մեթոդներից դեպի չափելի, բայց հաճախ մեխանիկ գործողություններ հարթություն, որտեղ ժողովրդավարական ներգրավվածությունը և տեղական ինքնության վրա հիմնված օրակարգերը մղվում են ետնաշերտ (Lang, 2013) :

Այս համատեքստում հայաստանյան քաղհասարակության ներսում նույնպես հնչում են կարծիքներ այն մասին, որ ինստիտուցիոնալ աճը, անկախ իր դրական կողմերից (կայունություն, փորձագիտականություն, քաղաքական ներգործություն), կարող է վտանգել քաղաքացիական շարժումների սոցիալական արմատները, եթե այն տեղի է ունենում լայն հանրային շերտերից խզման պայմաններում: Որոշ հետազոտության մասնակիցներ նշում են, որ հատկապես նախընտրական փուլերում, երբ հանրային քաղաքական ակտիվության մակարդակը բնականաբար բարձրանում է, կարևոր է քաղաքացիական հասարակության «վերադարձը» դեպի բազային հիմքերը՝ դեպի հանրության հետ անմիջական կապը: Այս միտքը ոչ միայն քաղաքական մարտահրավերի արձանագրում է, այլև հիշեցում քաղհասարակության ինքնությանը, արժեքներին ու նպատակներին վերադառնալու անհրաժեշտության մասին:

ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՄՏԱԾՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Վստահության հարցին անդրադառնում են տարբեր գիտակարգեր՝ սոցիոլոգիան, հոգեբանությունը, քաղաքագիտությունը, և յուրաքանչյուրն իր առանձին մոտեցումն ու մեկնաբանությունն է տալիս հասկացության առնչությամբ՝ հնարավոր դարձնելով ինստիտուտների ու համակարգերի հանդեպ հանրային վստահության չափման ուսումնասիրությունները շրջանակել ավելի լայն տեսամեթոդաբանական հղացքներով:

«Վստահություն և իշխանություն» (1979) առանցքային աշխատության մեջ գերմանացի սոցիոլոգ Նիկլաս Լումանը գրում է.

> ***«Առանց վստահության հնարավոր են մարդկային համագործակցության միայն խիստ պարզ՝ «տեղում» իրագործելի ձևեր, և նույնիսկ անհատական գործողությունն է չափազանց դյուրազգաց խաթարվելու, որպեսզի վստահություն չունենալու դեպքում ենթակա լինի պլանավորման՝ անմիջականորեն երաշխավորված պահից դուրս»*** (Luhmann 1979, 88):

Վստահության հանդեպ նման հայացքը հնարավոր է դարձնում ցուցադրել, թե ինչպես է վստահությունը միկրո մակարդակում նպաստում ավելի վերացական՝ համակարգային վստահության ձևավորմանը (Luhmann, 1988): Վստահությունը կամրջում է միջանձնային և համակարգային մակարդակները, և այդ դերում վստահության հարցի ուսումնասիրությունները և վերլուծությունները հատկապես ակտուալ դարձան արդի շրջանում, որ բնորոշվում է իբրև անորոշության, ռիսկի կամ, ինչպես բրիտանացի սոցիոլոգ Զիգմունդ Բաումանն է ձևակերպում, «հոսուն ժամանակներ» (Bauman, 2007): Անորոշության և ռիսկի հոսունության պայմաններում (ինչպես, օրինակ, կորոնավիրուսի համավարակը, անվերջ ընթացող պատերազմները) քաղաքական համակարգերի և ինստիտուտների, քաղաքական գործիչների, լրատվամիջոցների, միջազգային կառույցների հանդեպ հանրային անվստահությունը և կասկածամտությունը, վերջիններիս և հանրության միջև հաղորդակցության և երկխոսության խզումը ակնբախ են դարձել աշխարհի ամենատարբեր երկրներում:

Այս տեսանկյունից Լումանն առաջ է քաշում վստահության առանցքային գործառույթը՝ իրականության բարդության նվազեցումը (Luhmann, 1979): Ժամանակակից աշխարհի մարտահրավերները, ինչպես ցույց տվեցին Քովիդ-19-ի ճգնաժամը, պատերազմներն ու դրանց հաջորդող անորոշությունը, հաճախ անսպասելի են թե՛ իրենց բնույթով, թե՛ իրենց թողած հետևանքներով: Միաժամանակ կարևոր է նաև անվստահությունը՝ կրկին բարդության հետ հարաբերվելու և ժողովրդավար ինստիտուտների առողջ գործունեությունը ապահովելու տեսանկյունից: Անվստահությունը նվազեցնում է իրականության բարդությունը, քանի որ քաղաքական համատեքստ է ներմուծում կասկածամտություն, մշտարթունություն և խթանում ինստիտուցիոնալ փոփոխություններ: Այս համատեքստում վստահության սոցիալական փնտրտուքը դառնում է ռեֆլեքսիվ նախագիծ, որը հենված է այն գիտելիքի վրա, որ աշխարհը ոչ թե պարզապես տրվածություն է, այլ մարդկային փոխակերպող գործունեության արդյունք (Giddens, 1991): Ընդունված է համարել, որ ժամանակակից հասարակությունները դառնում են ռիսկի հասարակություններ, սակայն հիմնական խնդիրը ոչ թե ռիսկերի քանակն է, այլ դրանց անխուսափելիությունը հանրային-քաղաքական և անհատական կյանքերում (Giddens, 1990): Մենք այս ռիսկերի անխուսափելիությունը նկատում ենք մեր կյանքում և առօրյայում, աշխարհում՝ սկսած կորոնավիրուսի համավարակից մինչև անվերջանալի պատերազմներ:

Այս պայմաններում ռիսկերը և դրանց հետևանքները գլոբալիզացվում են և դառնում հանրային կյանքի անբաժան մասը: Այս իրավիճակը նվազեցնում է հանրային վստահությունը մասնագիտական հանրույթների հանդեպ և բացասական ազդեցություն ունի մարդկանց անհատական պաշտպանվածության զգացողության վրա (Giddens, 1990):

Ինստիտուտների, համակարգերի հանդեպ հանրային վստահությունը տեղ ունի, երբ կան դրանցից հանրային ակնկալիքներ: Հակառակ պարագայում այն, ինչ ունենք, հույսն է, որ հաճախ կարելի է շփոթել վստահության հետ: Ի տարբերություն հույսի՝ վստահությունը, չնայած անորոշությանը, հաշվի է նստում անկանխատեսելի կամ պատահական հանգամանքների հետ և մշտապես պահանջում է ինքնանդրադարձի ջանք, հակառակ պարագայում վստահությունը կարող է վերածվել շարունակական հիասթափության: Հանրային վստահությունը չի ենթադրում, որ վստահող գործորդն անպայմանորեն ձգտում է իմանալու բոլոր ճշմարտությունները.

խնդիրը իրականության բարդության հետ հնարավորինս դյուրին հարաբերվելու հարցն է: Այստեղ ավելի կարևոր է այն գիտակցումը, որ մյուսները ևս վստահում են համակարգին կամ ինստիտուտին:

Քաղաքացիական հասարակության և հանրության միջև վստահության խնդիրը շատ հաճախ քննարկվում է վերացական մակարդակում՝ առանց հստակ հղումների այն գործոններին, որոնք իրականում պայմանավորում են այդ վստահության առկայությունն ու բացակայությունը: Հաճախ մենք ընկնում ենք տրամաբանական երկխոսությունից կտրված դիսկուրսների մեջ՝ ինչ-որ առումով չարձագանքելով նաև գլոբալ միտումներին, չհստակեցնելով «վստահություն» հասկացության չափման մեխանիզմները:

Հայաստանյան իրականությունում քաղաքացիական հասարակության կազմակերպությունները և հասարակական ոլորտի այլ դերակատարներ տարիներ շարունակ պիտակավորվել են «գրանտակեր», «անգործ», «պարապ», «եվրոպական արժեքներ տարածող», «հասարակության ավանդական արժեքները խարխլող», «օտարերկրյա գործակալներ» և այլ համանման հասկացություններով: Այս պիտակավորող լեզվամտածողությունը ոչ միայն ազդում է հանրային ընկալումների վրա, այլև սահմանափակում է ՔՀԿ-ների դերակատարումը հասարակական-քաղաքական դիսկուրսում:

Տարբեր հետազոտություններ ու հարցումներ փորձում են չափել հանրության վստահությունը ՔՀԿ-ների նկատմամբ, սակայն արդյոք «վստահություն» հասկացությունը բավակա՞ն է քաղաքացիական հասարակության և հանրության փոխհարաբերությունները բնութագրելու համար: Եթե ոչ, ապա ի՞նչ այլ գաղափարներ ու չափորոշիչներ կարող են կիրառվել: Վստահությունը, որպես սոցիալական կապի մեխանիզմ, ի՞նչ դեր ունի այստեղ: Ինչպես սոցիոլոգ Նիկլաս Լումանն է ընդգծում, վստահությունը ձևավորվում է այնտեղ, որտեղ առկա են ակնկալիքներ: Իսկ արդյոք հանրությունն ունի՞ ակնկալիքներ քաղհասարակությունից: Եթե այո, ո՞րն է այդ ակնկալիքի բովանդակությունը, և ինչպիսի՞ն է քաղհասարակության արձագանքը:

Այս հարցերը շատ ավելի ընդգրկուն դիսկուրս են բացում՝ դուրս գալով միայն վստահության մակարդակները քանակապես չափելու սահմաններից: Քաղաքացիական հասարակության կազմակերպությունները, որոնք իրենց էությամբ մի կողմից՝ կամուրջ են հանրության խոցելի շեր-

տերի և պետական կառույցների միջև, մյուս կողմից՝ հասարակական խնդիրների բարձրաձայնման և որոշում կայացնողներին հասցեագրելու դեր ունեն, բավարար չափով ներկայացվա՞ծ են հանրային հարթակներում և կարո՞ղ են արդյոք լիարժեքորեն կապ հաստատել հանրության տարբեր խմբերի հետ:

Ի վերջո հարց է առաջանում. ինչպիսի՞ ռեսուրսներ, հարթակներ կամ մեխանիզմներ կան այդ երկխոսության համար: Արդյոք ՔՀԿ-ները կարողանո՞ւմ են ինքնառեֆլեքսիայի ենթարկել իրենց՝ հասկանալու համար՝ ճանաչում են արդյոք այն հասարակությանը, որի համար և որի հետ ենթադրաբար գործում են:

Քաղհասարակության և հանրության հարաբերությունները անհրաժեշտ է դիտարկել ոչ թե մեկ ուղղությամբ՝ «վստահում են/չեն վստահում» երկբևեռության շրջանակում, այլ որպես բազմաշերտ փոխազդեցություն, որի հիմքում ընկած են արժեքային համակարգեր, ակնկալիքներ, փորձառություններ և հաղորդակցման հարթակներ: Հենց այս ներառական և քննադատական վերլուծական մոտեցումն է, որ կարող է նպաստել քաղաքացիական հասարակության նկատմամբ հանրային ընկալումների վերաիմաստավորմանը:

Հանրային հաղորդակցության բացերը հաճախ բերում են այն իրավիճակին, երբ լայն հասարակությունը խիստ սահմանափակ պատկերացում ունի քաղհասարակության դերի, գործառույթների, ինչպես նաև իրականացրած աշխատանքի բնույթի ու ծավալների մասին: Արդյունքում հանրության մոտ կա՛մ ձևավորված չէ հստակ վերաբերմունք քաղհասարակության հանդեպ, կա՛մ առկա է խորքային անվստահություն, որը տարիներ շարունակ սնուցվել է վարկաբեկող նարատիվներով, քարոզչական արշավներով և մեդիայում տարածված կարծրատիպերով:

Հետազոտական տվյալները վկայում են, որ մարդկանց միայն 18%-ն է տեղյակ իրենց համայնքում գործող քաղաքացիական հասարակության կազմակերպություններից (ՔՀԿ-ներից), մինչդեռ մեծամասնությունը՝ 82%-ը, չունի այդպիսի տեղեկություն[12]: Ավելի ուշագրավ է, որ Երևանում տեղեկացվածության մակարդակը առավել ցածր է. հարցված երևանցիների

12 ՀՌԿԿ-Հայաստան. (2022). *Իրազեկվածություն-ընկալումներ-ներգրավվածություն եռանկյունիում. Հայաստանյան քաղաքացիական հասարակությունը մի քանի խոսքով:* Բաց հասարակություն հիմնադրամներ (ԲՀՀ)-Հայաստան:

միայն 10%-ն է նշել, որ տեղյակ է իր համայնքային ՔՀԿ-ներից, մինչդեռ մարզային քաղաքներում այս ցուցանիշը 31% է[13]:

Անտեղյակության այս մակարդակի պայմաններում պարզապես անբավարար է խոսել վստահության «լինելու» կամ «չլինելու» մասին: Այստեղ առաջնահերթ է ոչ թե վստահության աստիճանի, այլ ճանաչելիության և կապի առկայության կամ բացակայության հարցը:

Այս թվերը խոր պատկերացում են տալիս այն մասին, որ քաղաքացիական հասարակությունը հանրության ընկալումներում դեռևս մշուշոտ է ու հեռու: ՔՀԿ-ների դերը հանրային դիսկուրսում կամ անտեսվում է, կամ սխալ է ընկալվում: Վերը հիշատակված հետազոտությունը վկայում է, որ քաղաքացիական հասարակության մասին ընկալումները հաճախ կամ անորոշ են, կամ կողմնակալ. հարցվածների միայն 18%-ն է քաղաքացիական հասարակությունը սահմանում որպես «ֆորմալ և ոչ ֆորմալ քաղաքացիական գործունեության լայն շրջանակ, այսպես կոչված՝ «երրորդ սեկտոր, որը դուրս է պետական և մասնավոր հատվածներից»», 15%-ն ընտրել է «քաղաքական կուսակցություններ և քաղաքական կազմակերպություններ» տարբերակը, իսկ գրեթե 12%-ը այն սահմանել է որպես «խմբեր և կազմակերպություններ, որոնք ֆինանսավորվում են օտար ուժերի կամ «օտարերկրյա գործակալների» կողմից»[14]:

Այս պատկերացումները, բացի տեղեկատվության պակասից, արմատավորվում են նաև տարիների ընթացքում հանրային խոսքի, մեդիայի և որոշ քաղաքական խմբերի կողմից ձևավորված նարատիվների պատճառով: Քաղհասարակության՝ հասարակությունից «առանձին», նույնիսկ «օտար» մարմին ընկալվելու հետևանքներից է նաև այն, որ հանրային սպասումները հաճախ լինում են չափազանցված, իրականությունից կտրված կամ շփոթեցնող: Այս անորոշության պատճառներից մեկն էլ հենց երկխոսության բացակայությունն է:

> *«Մեր հասարակությունը չի հասկանում՝ ինչ է քաղհասարակությունը: Հասարակությունը մեզ դիտարկում է որպես միջանկյալ հատվածում գտնվող մեկը, որը ո՛չ իշխանություն է, ո՛չ ընդդիմություն, և որը պիտի ունենա անկախ ու չեզոք դիրքորոշում, նույնիսկ՝ քննադատի իշխանությանը»*:

Քաղհասարակության ներկայացուցիչ, կին

13 Նույն տեղում:

14 Նույն տեղում:

Քաղհասարակությունը հանրային ընկալումներում հաճախ դիտարկվում է ոչ թե որպես հենց հասարակության մաս, այլ որպես առանձին գործող ուժ: Սա միայն հայկական իրականությանը բնորոշ խնդիր չէ, բայց մեր համատեքստում արտահայտվում է ավելի սուր ձևով (McMahon, P. C., Pickering, P. M., & Pietrzyk-Reeves, D., 2024): Մեդիան, քաղաքական շահեր հետապնդող տարբեր ուժեր, ինչպես նաև հանրության հետ ՔՀԿ-ների ուղիղ երկխոսության պակասը նպաստում են քաղհասարակության նկատմամբ անվստահության ամրապնդմանը:

Հետազոտության մասնակիցները բազմիցս նշում են, որ անկախ իրենց ոլորտից կամ առանձին խմբերի հետ ունեցած աշխատանքի փորձից՝ քաղհասարակության և հանրության միջև գոյություն ունեցող երկխոսության խզումը ակնհայտ է: Այս խզումը, ըստ նրանց, արտահայտվում է առաջին հերթին լեզվի և բառապաշարի անհամապատասխանության մեջ՝ այն բանի, թե ինչպես է քաղաքացիական հասարակությունը ձևակերպում խնդիրները, և ինչպես է հանրությունը դրանք ընկալում[15]:

«Արդյոք մենք ճանաչո՞ւմ ենք այն հասարակությանը, որի անունից խոսում ենք: Արդյոք մենք բարձրաձայնո՞ւմ կամ կարողանո՞ւմ ենք լուծման ուղիներ գտնել այն խնդիրներին, որոնք իսկապես հանրությանը հուզում են: Եվ եթե այո, ապա արդյոք խոսո՞ւմ ենք նույն լեզվով, որով այդ խնդիրները հանրությունը ձևակերպում է»:

Այս հարցադրումները վեր են հանում լեզվի՝ որպես ոչ միայն հաղորդակցության, այլև քաղաքական և մշակութային ազդեցության գործիքի կարևորությունը: Երբ հանրության խնդիրները ձևակերպվում են այլ լեզվով, այլ օրակարգով և առանց հանրության ակտիվ մասնակցության, ապա երկխոսությունը ոչ միայն խզվում է, այլև չի էլ սկսվում:

> ***«Այդ դիալոգի [հանրության և քաղհասարակության միջև] չլինելը հետևյալն է, որ որոշ դեպքերում մեծ հանրությունը իրականում համամիտ չի մեր հետ, ինքը ունի իր սեփական նպատակները»:***

Քաղհասարակության ներկայացուցիչ, տղամարդ

> ***«Այդ ամբողջ գաղափարներին մեր հասարակությունը լայն իմաստով չի դավանում իմ տպավորությամբ»:***

Քաղհասարակության ներկայացուցիչ, կին

15 Youtube. (2023) *Բուն զրույց. Մարդաբանություն | Աղասի Թադևոսյան | Օլյա Ազատյան.* վերցվել է՝ https://www.youtube.com/watch?v=fmcuwBy8eYo

Այսինքն՝ հարցն այն չէ միայն, թե ինչ է ասում քաղհասարակությունը, այլ նաև՝ ով է խոսում, ում անունից է խոսում, և լսելի դառնալու ինչ հնարավորությունը կա: Երբ հանրության տարբեր խմբերը հնարավորություն չունեն ձևակերպելու իրենց խնդիրները, այնուհետև բարձրացնելու այդ խնդիրները որպես օրակարգ, քաղաքացիական հասարակությունը կորցնում է իր լեգիտիմությունը որպես հանրային կամքի արտահայտիչ:

Դրա համար անհրաժեշտ է, որ քաղհասարակությունը հաղթահարի հանրության փոխարեն կամ դրա անունից խոսելու գայթակղությունը: Այդ փոփոխությունը հնարավոր է միայն այն ժամանակ, երբ կայանում է երկխոսություն, որը հիմնված է ճանաչման, փոխադարձ լեզվի և ընդհանուր նպատակների շուրջ ձևավորված վստահության վրա:

> *«Հայաստանում ամբողջ գյուղացիությունը՝ որպես խավ, ամենաճզմված, ամենաստորացված վիճակում է: Եթե դու ուզում ես մտնել գյուղական համայնք ու լսելի լինել, դու պետք է առաջինը լսես: Ո՞ր ՀԿ-ն է արձանագրում գյուղացիների անհավասարության պրոբլեմը. հողը խլում են, ֆերմերային տնտեսություններ են հիմնում, խոշորացման են տանում, հազար ու մի բան»:*

Կին ակտիվիստ

Միաժամանակ սոցիալական աջակցության ոլորտում քաղհասարակության դերն առավել տեսանելի է հանրության տարբեր շերտերի համար: Մասնավորապես այս ընկալումը ավելի տիրապետող է դարձել կորոնավիրուսի համավարակի ընթացքում և Ղարաբաղյան երկրորդ պատերազմից ու Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված հայերին ցուցաբերած հումանիտար աջակցության համատեքստում: Սա ցույց է տալիս, որ հանրության իրազեկվածության և դրական ընկալումների աճը հնարավոր է միայն մարդկանց խնդիրներին խորապես արձագանքող աշխատանքի դեպքում: Իրականությունը, սակայն, այն է, որ քաղհասարակությունը տևականորեն գտնվում է փոփոխությունների և քաղաքական անորոշության ներքո:

> *«Մենք էլ ենք կորսված, մենք էլ չգիտենք՝ ինչ անենք, ուր գնանք: Մենք էլ ենք, ի վերջո, այս հասարակության մաս: Ինձ թվում է՝ ինքներս մեզ գնահատելը շատ կարևոր է»:*

Քաղհասարակության ներկայացուցիչ, կին

Հանրության հետ հարաբերությունների խզման և նոր դիրքավորման որոնումների պայմաններում քաղհասարակության ներկայացուցիչները վերանայում են համագործակցության ձևերն ու երկխոսության հնարավոր հարթակները: Նպատակն է՝ գտնել այն մեխանիզմներն ու ռեսուրսները, որոնք կարող են նպաստել քաղհասարակության և հանրության միջև վստահության վերականգնմանը:

Այս խզումներին հաճախ լեգիտիմացնող հիմնավորումներ են տրվում նաև գլոբալ աշխարհաքաղաքական զարգացումներով: Մասնավորապես, մարդու իրավունքների և քաղհասարակության դերի վերաբերյալ վարող միջազգային դիսկուրսը՝ Դոնալդ Թրամփի վարչակազմի կողմից ԱՄՆ ՄԶԳ-ի ֆինանսավորման 90% կրճատման, ինչպես նաև եվրոպական երկրներում ուլտրանացիոնալիստական քաղաքական օրակարգերի տարածման համատեքստում, նպաստում են հակագենդերային խմբերի ակտիվացմանը: Սրանք դառնում են գործոններ, որոնք լրացուցիչ ճնշում են գործադրում քաղհասարակության և հանրության առանց այն էլ փխրուն հարաբերությունների վրա՝ հաճախ օգտագործվելով մեդիա քարոզարշավների միջոցով:

ԱՄՓՈՓՄԱՆ ՓՈԽԱՐԵՆ. ՔԱՂՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ 2026 Թ. ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱՇԵՄԻՆ

1990-ականներից ի վեր ընտրությունները համարվել են ժողովրդավարության կառուցման առանցքային բաղադրիչներից, որը հատկապես խթանվել է արևմտյան պետությունների և դոնոր կազմակերպությունների կողմից: Այս գործընթացը հատուկ ընդգծում ստացավ Արևելյան Եվրոպայի և նախկին Խորհրդային Միության երկրների համատեքստում՝ որպես ժողովրդավարացման առաջնային ցուցիչ: Ընտրությունների անցկացումը, դրանց թափանցիկությունն ու արդարությունը դիտարկվել են որպես ինստիտուցիոնալ զարգացման հիմնարար պայմաններ, և այդ նպատակով նշանակալի ռեսուրսներ են ուղղվել թե՛ ընտրական համա-

կարգերի տեխնիկական ամրապնդման, թե՛ դիտորդական կառույցների ձևավորման ուղղությամբ (Ishkanian, 2008):

Տարիներ շարունակ հայաստանյան քաղհասարակությունը հետևողականորեն աշխատել է արդար և թափանցիկ ընտրությունների ապահովման ուղղությամբ՝ դրանք դիտարկելով որպես ժողովրդավարական կառավարման հիմնական պայման: 2018 թվականի հեղափոխությունից հետո ազատ և արդար ընտրությունների իրականացումը հաճախ ներկայացվել է որպես ժողովրդավարական Հայաստանի առանցքային ձեռքբերում: Թեև սա նշանակալի առաջընթաց է, քաղաքական իշխող ուժի կողմից այդ փաստը երբեմն շահարկվում է որպես ժողովրդավարության համապարփակ ցուցիչ՝ անտեսելով այն հանգամանքը, որ ժողովրդավարությունը միայն ընտրություններով չի սահմանափակվում: Ինչպես հաճախ է նշվում՝ ***«ժողովրդավարությունը կարող է լինել ավելին, քան ազատ և արդար ընտրությունները, բայց չի կարող լինել առանց դրանց»*** (Pastor, 2004, ինչպես մեջբերված է Ishkanian, 2008-ում):

1995-ից մինչև 2018 թվականը թե՛ հայաստանյան հասարակությունը՝ լայն իմաստով, թե՛ քաղաքացիական հասարակությունը իրենց գործունեության ընթացքում շարունակաբար բախվել են անարդար և ոչ թափանցիկ ընտրական պրակտիկաների: Այդ ընթացքում բազմապիսի ռեսուրսներ են ներդրվել՝ ժողովրդավարությանը բնորոշ ազատ, արդար և թափանցիկ ընտրությունների հասնելու նպատակով: 2018-ի թավշյա հեղափոխությունն այս ճանապարհին կարևոր հանգրվան էր՝ ամրապնդելով ժողովրդավարական ակնկալիքները:

Սակայն սպասվող՝ 2026 թվականի խորհրդարանական ընտրությունները այլևս միայն հերթական քաղաքական գործընթաց չեն: Դրանք գալիս են հիշեցնելու և վերահիմաստավորելու քաղաքացիական հասարակության դերակատարությունը՝ հատկապես փխրուն ժողովրդավարական արժեքների պահպանման և ամրապնդման համատեքստում: Ներքաղաքական բևեռացումները, աշխարհաքաղաքական լարվածությունները և հանրության հետ հարաբերությունների խզման միտումները նոր մարտահրավերներ են, որոնք պահանջում են քաղհասարակությունից առավել միանշանակ, համակարգված և ինքնավերլուծական մոտեցում:

Այս պայմաններում անհրաժեշտ է վերստին վերաշարադրել քաղաքացիական հասարակության պահանջներն ու ներգրավվածության ռազ-

մավարությունները՝ ինչպես իշխանությունների, այնպես էլ հանրության լայն շերտերի հետ հաղորդակցվելու ու վստահություն կառուցելու նպատակով: Մասնավորապես կարևոր է անդրադառնալ արդեն իսկ նշված՝ հանրային բևեռացվածության, լեգիտիմության ճգնաժամի և քաղաքացիական նախաձեռնությունների նկատմամբ հոռետեսության հաղթահարման հարցերին՝ ձևավորելով նոր երկխոսության մշակույթ:

Քաղհասարակության ներկայացուցիչների հետ քննարկումները առանցքային են՝ հատկապես խորհրդարանական ընտրությունների նախաշեմին: Այս քննարկումները վեր են հանում մի շարք հարցադրումներ, որոնք պահանջում են ոչ միայն ռազմավարական վերաիմաստավորում, այլև կոնկրետ գործողությունների մշակման անհրաժեշտություն: Արդյոք ի՞նչ դեր է պատկերացնում և պատրաստ է ստանձնելու քաղաքացիական հասարակությունը ժողովրդավարական արժեքների պահպանման այս փխրուն փուլում: Բավարար համարո՞ւմ է արդար և թափանցիկ ընտրությունների անցկացումը ժողովրդավարացման գործընթացում, թե՞ անհրաժեշտ է բազմաշերտ մոտեցում, որը ներառում է նաև հանրային տարածքի վերանվաճումը, հանրության հետ երկխոսության նոր ուղիների որոնումը:

Թերևս առաջիկա խորհրդարանական ընտրությունների համատեքստում քաղաքացիական հասարակության առաջնային անելիքներից է իր՝ որպես վերահսկող և հաշվետվողականություն ապահովող (watchdog) դերակատարության վերարժևորումը: Վերջին տարիներին մասնավորապես համայնքային ընտրությունների ընթացքում արձանագրված վարչական ռեսուրսի կիրառման դեպքերը, նախկին քրեաօլիգարխիկ ուժերի վերակազմավորումը և դրանց հանրային ազդեցության ակտիվացումը հատկապես ընդգծում են հանրային վերահսկողության անհրաժեշտությունը՝ որպես ժողովրդավարության ապահովման գործիքի:

Այս խնդիրները խորանում են նաև գլոբալ աշխարհաքաղաքական զարգացումների ֆոնին, որտեղ արտաքին քաղաքական և ֆինանսական ազդեցությունները կարող են էապես ազդել ներքին կայունության վրա: Այսպիսի օրինակներից է Ռումինիայի փորձը, որտեղ ընտրական գործընթացներն ուղեկցվում են արտաքին ազդեցությունների միջոցով ժո-

ղովրդավարական վերահսկողության թուլացման փորձերով[16]: Նման համատեքստում Հայաստանի քաղաքացիական հասարակությունը ևս կանգնած է մարտահրավերի առջև՝ պահպանել և զարգացնել ինստիտուցիոնալ վերահսկողության մեխանիզմները:

Քննարկումների մասնակիցները միանշանակորեն ընդգծում են, որ քաղհասարակությունը պետք է վերագտնի իր իրական դերակատարումը ոչ միայն որպես ընտրական գործընթացների դիտորդ, այլև որպես քաղաքականության ձևավորման և հանրային որոշումների կայացման ընթացքի ակտիվ հետևող և վերլուծող ուժ: Այս դիրքավորումը, սակայն, գնալով բարդանում է՝ պայմանավորված հակաժողովրդավարական դերակատարների ակտիվացմամբ, որոնք նպատակ ունեն նվազեցնելու հանրային վերահսկողության տարածությունն ու ազդեցությունը:

> ***«Ես ՀԿ-ների դերը տեսնում եմ ավելի շատ վերահսկողական՝ watchdog ֆունկցիայի մեջ, ոչ թե հանրության ակտիվությունն ու մասնակցությունը խրախուսելու մեջ: Վերահսկողությունը պետք է լինի նույնիսկ քարոզարշավից առաջ՝ մինչև ընտրությունների ընթացքը»:***

Քաղհասարակության ներկայացուցիչ, կին

Քաղհասարակության՝ որպես «վերահսկողի» դերի խարխլման և դրա վերականգնման հարցը քննարկման մասնակիցների կողմից գրեթե միաձայն ընդունվեց որպես առաջնահերթություն: Սակայն քննարկումները դուրս եկան միայն վերահսկողական գործառույթի շրջանակից՝ շոշափելով այն հարցերը, թե արդյոք գոյություն ունեն այլ հարթակներ, ռեսուրսներ կամ հնարավորություններ, որտեղ քաղաքացիական հասարակությունը կարող է հանդես գալ ոչ միայն վերահսկող, այլև հանրային արժեքների ձևավորող, հանրային տարածքների վերստեղծող և երկխոսության վերագործարկող դերերով:

Քննարկումները տեղի էին ունենում տարբեր շերտերում: Մասնակիցների մի մասը ընդգծում էր արդյունավետության և կենտրոնացվածության անհրաժեշտությունը՝ նշելով, որ քաղաքացիական հասարակությունը պետք է զբաղվի իր կոմպետենտության ոլորտներով՝ չփորձելով «հեծա-

16 Dempsey, J. (2025, February 15). *Russian interference: Coming soon to an election near you.* Carnegie Europe. https://carnegieendowment.org/europe/strategic-europe/2025/02/russian-interference-coming-soon-to-an-election-near-you?lang=en

նիվ հորինել»: Մյուսները, հակառակը, կարևորում էին նոր մոտեցումների և գործիքակազմի մշակումը՝ ընդգծելով, որ ժողովրդավարական արժեքների պահպանումը ներկա աշխարհաքաղաքական և ներքաղաքական միջավայրում պահանջում է նորագույն մոտեցումներ, թեմատիկ ընդլայնում և հանրային ներգրավվածության նոր մոդելներ:

Այս առումով կարևորվեց այն միտքը, որ 2026 թվականի խորհրդարանական ընտրությունները չպետք է դիտարկվեն որպես մեկանգամյա իրադարձություն կամ միայն այդ պահին ակտիվանալու առիթ: Ընդհակառակը՝ քաղաքացիական հասարակությունը պետք է ձևավորի շարունակական ներգրավվածություն քաղաքական և հանրային գործընթացներում թե՛ ընտրություններից առաջ, թե՛ դրանց ընթացքում և հատկապես՝ ընտրություններին հաջորդող փուլում: Հանրային վստահության, մարդու իրավունքների պաշտպանության և սոցիալական արդարության հաստատման աշխատանքները երկարաժամկետ են և պետք է ուղեկցվեն նաև հանրության հետ հարաբերությունների վերակառուցմամբ:

Մասնակիցները կարևորում էին ոչ միայն գործելակերպի, այլև լեզվի փոփոխության անհրաժեշտությունը: Հասարակության հետ հարաբերվելու եղանակները պետք է ներառական լինեն, հասկանալի և տարբեր սոցիալական խմբերի առօրյա փորձառության հետ առնչվող: Քաղհասարակության գործունեության լեզուն պետք է լինի ոչ միայն փաստագրող ու վերահսկող, այլև մոտեցող, բացատրող ու լսող: Սա ենթադրում է հանրության հետ աշխատանքի գիտակցված ու մշտական մոտեցում՝ որպես «քաղաքական և հանրային գործընթացների բաղադրիչ», այլ ոչ թե արշավային բնույթի գործողությունների շարք:

Հանրության հետ երկխոսության վերականգնման համատեքստում առաջ եկավ նաև կրթության, մասնավորապես՝ քաղաքական կրթության թեման: Քաղհասարակության ներկայացուցիչները քննարկում են իրենց՝ որպես ժողովրդավարական արժեքների փոխանցողների և հանրային կրթության ձևավորողների դերակատարումը: Ընտրություններին նախորդող ժամանակահատվածը դիտվում է որպես հնարավորություն՝ կրթական նախաձեռնությունների, գիտելիքի տարածման ու հանրային գիտակցության բարձրացման տեսանկյունից: Սակայն այս մոտեցումն էլ ենթարկվեց որոշակի քննադատության՝ ի ցույց դնելով այն ռիսկը, երբ կրթական աշխատանքը վերածվում է էլիտիստական քարոզի՝ առանց

հանրային համատեքստի զգայուն ըմբռնման: Հենց այս պատճառով վերադառնում է լեզվի հարցը. կարևորվում է հարաբերվելու նոր ձևեր և ուղիներ գտնելը՝ կառուցված փոխադարձ ճանաչման և վստահության վրա:

> *«Ժողովուրդը շատ լավ հասկանում է, թե ինչ է տեղի ունենում, շատ լավ կարողանում է գնահատականներ տալ այն իրականությանը, որում ապրել է, և այն իրականությանը, որտեղ հիմա է: Նաև կարողանում է ձևակերպել իր խնդիրները, որոնք մեծ մասամբ կապված են անհավասարության ու համակարգային անարդարության հետ: Երևի դա էլ պետք է լինի հեռման կետը, այդտեղից պետք է սկսել խոսակցությունը ժողովրդի հետ: Մենք էլ պետք է մեզ վերանայենք՝ մեր ուսուցչական դերը»:*

Քաղհասարակության ներկայացուցիչ, կին

Ժամանակակից գլոբալ համատեքստում, երբ հակաժողովրդավարական ուժերը փորձում են յուրացնել մարդուի իրավունքների և ժողովրդավարության լեզուն՝ այն վերափոխելով իրենց քաղաքական նպատակներին համահունչ, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները հաճախ հայտնվում են թիրախում (Մարգարյան, 2022): Ակտիվիստները, իրավապաշտպանները և ընդհանրապես քաղհասարակության դերակատարները դառնում են այդ գործընթացի հիմնական զոհերը:

Յուրաքանչյուր կարևոր քաղաքական իրադարձությունից առաջ կրկնվում է նույն սցենարը. քաղհասարակության թիրախավորման համար օգտագործվում են նման գործիքներ՝ ապատեղեկատվություն, ատելության խոսք, ուղղակի կամ անուղղակի հարձակումներ: Այս պայմաններում հատկապես կարևոր է դառնում քաղհասարակության կարողությունը նման հարձակումներին դիմակայելու, արագ արձագանքելու և հանրության հետ հստակ ու վստահելի հաղորդակցություն կառուցելու գործում:

Քննարկումների մասնակիցներից շատերը իրենց դերը տեսնում են ոչ միայն որպես վերահսկող կամ վերլուծող ուժ, այլև որպես ժողովրդավարությանը սատարող գիտելիքի տարածող: Նրանք ընդգծում են քաղաքական կրթության, քննադատական մտածողության խթանման և հանրային բանավեճի մշակույթի զարգացման կարևորությունը՝ որպես ժողովրդավարական դիմադրողականության ամրապնդման միջոց:

«...Քաղաքական կրթությունը ավելի լավ կպատրաստի հասարակությանը ընտրություններին, և մենք ավելի հանգիստ շնչով կգնանք այդ ընտրությունների փուլով՝ շատ չվախենալով, որ հասարակությանը կարելի է հանգիստ տանել և դարձնել դիկտատուրայի ձևավորման գործիք՝ էլեկտորալ պրոցեսի միջոցով»:

Քաղհասարակության ներկայացուցիչ, տղամարդ

Հետազոտության մասնակիցները նշում են, որ կրթությունը պետք է դիտարկվի ոչ թե պարզապես որպես տեղեկատվության փոխանցման գործընթաց, այլ որպես գործականություն ձևավորելու և վերարթնացնելու հնարավորություն՝ հատկապես ներկա անորոշության պայմաններում: Քաղաքացիական կրթական նախաձեռնությունները կարող են դառնալ հանրային մասնակցության խթանման և ժողովրդավարական արժեքների վերահաստատման գործիք, սակայն այս աշխատանքը չի կարող սահմանափակվել միայն ընտրական ժամանակահատվածներով: Հատկապես վերջին տարիներին, երբ հանրային տարածքը հեղեղվել է այլ դերակատարներով, այդ թվում՝ հակաժողովրդավարական ուժերով, քաղհասարակության շարունակական ներգրավվածությունը տարբեր սոցիալական խմբերի հետ դառնում է կենսական կարևորություն ունեցող գործընթաց:

Քննարկումներում ընդգծվեցին նաև քաղհասարակության ներկա գործունեության որոշ սահմանափակումներ, մասնավորապես՝ ինտերսեկցիոնալության պակասը, ինչպես նաև ներքին համերաշխության ցածր մակարդակը: Քաղհասարակության որոշ ինստիտուցիոնալ միավորներ և ՀԿ-ներ հաճախ գործում են մեկուսացված՝ կենտրոնանալով իրենց նեղ կազմակերպական օրակարգերի և թիրախային խմբերի վրա: Սա հանգեցնում է ոլորտում փոխկապակցվածության և համընդհանուր պատասխանատվության բացակայությանը, որն իր հերթին խոչընդոտում է ավելի լայն ու համակարգված գործողությունների կազմակերպումը:

Քաղհասարակության ինստիտուցիոնալացումն ու «ՀԿ-ացումը» երբեմն նաև վերածվում են փոխադարձ օտարման՝ ստեղծելով այնպիսի միջավայր, որտեղ գործընկերային կապերը, համատեղ օրակարգերը և համերաշխ գործելակերպը մղվում են ետին պլան: Այս պայմաններում անհրաժեշտ է վերահիմաստավորել համագործակցության մշակույթը՝

քաղաքացիական հասարակության դերակատարներին դուրս բերելով մեկուսացվածությունից և վերակենդանացնելով ընդհանուր արժեհամակարգը:

«Մենք չունենք գնալու, բոլորի կողքը կանգնելու սոլիդարություն: Սա շատ-շատ մեծ խնդիր է, որը թուլացնում է [քաղհասարակությանը], նաև հանրության աչքերում վստահության հարցն է առաջ գալիս»:

Քաղհասարակության ներկայացուցիչ, կին

Քաղհասարակության ներսում հարաբերությունների կայունացման համար կարևոր են բազմակարծության հանդեպ հարգանքն ու փոխադարձ համբերատարությունը: Քաղաքացիական հասարակությունը պետք է հիմնված լինի բազմակարծությունը ընդունելու և ներառականության սկզբունքների վրա:

Թեև հետազոտության մասնակիցները բազմակարծությունը կարևոր են համարում քաղհասարակության համար, իրականում երբեմն սեփական կարծիքը կամ կազմակերպության դիրքորոշումը չհայտնելու տենդենցը խանգարում է քաղհասարակության արդյունավետ գործունեությանը: Դա հատկապես ակտուալ է խորհրդարանական ընտրությունների նախաշեմին, երբ հակաժողովրդավար ուժերը ակտիվանում են:

«Մենք էլ պետք է սովորենք բազմազանության հետ ապրելու ձևերը, մեր ներսում մի քիչ ավելի հանդուրժողական լինենք երևի: Բայց արժեքային տեսանկյունից շատ դժվար է»:

Քաղհասարակության ներկայացուցիչ, կին

Ընտրություններից առաջ քաղհասարակության քաղաքական մասնակցության հարցը հաճախ դուրս է մնում գործուն քննարկումներից կամ մնում է ոչ բավականաչափ մտածված: Թեև որոշ շրջանակներում այս թեման իբրև թե առկա է, քաղհասարակությունը հիմնականում ձգտում է պահպանելու «վերահսկողի» իր դիրքը՝ չներքաշվելով քաղաքական գործընթացների մեջ որպես ակտիվ քաղաքական ուժ: Սա, մի կողմից, պայմանավորված է քաղաքական դեր ստանձնելու պատրաստակամության պակասով, մյուս կողմից էլ՝ համակարգից անկախ մնալու և «ապահով, հարմար միջավայրում» «ստերիլ» մնալու ցանկությամբ:

Վերջին տասնամյակներին քաղհասարակության կազմակերպությունների կտրուկ աճը, որոշ դիտարկումների համաձայն, դիտվում է որպես գլոբալ ժողովրդավարությունների վերակենդանացման նշան: Մինչ որոշ մեկնաբանություններում հասարակական կազմակերպությունները ներկայացվում են որպես քաղաքացիական մասնակցության փրկիչներ, այլ՝ առավել քննադատական վերլուծություններում կասկածի տակ է առնվում դրանց ներկայացուցչականությունը:

Այս հակասական պատկերացումների հիմքում ընկած է կարևոր հարցադրում. ի՞նչն է ՀԿ-ներին և լայն իմաստով՝ քաղաքացիական հասարակությանը դարձնում լեգիտիմ դերակատարներ ժամանակակից հանրային ոլորտում:

Այս քննարկման շրջանակում առավել էական է դառնում լեգիտիմության ոչ թե ֆորմալ կամ կազմակերպչական բնույթը, այլ հանրային ներգրավվածությամբ պայմանավորված լինելը: Պարադոքսն այն է, որ հենց այս՝ հանրություն ձևավորելու և դրանց հետ հաղորդակցվելու հնարավորությունն է հաճախ անտեսվում կամ մի կողմ դրվում քաղհասարակությունների կողմից՝ ի նպաստ ծրագրային արդյունավետության և քաղաքական փորձագիտականության (Calhoun, 2011):

Սակայն քաղհասարակության գործունեության հանրային բնույթը կենտրոնանում է մեկ հիմնական հարցի վրա. ո՞ւմ անունից են խոսում ՀԿ-ները և ո՞ւմ են ներկայացնում: Թեև սա առաջին հայացքից պարզ հարցադրում է, այն պարունակում է լուրջ երկիմաստություններ: Եթե քաղհասարակությունը հանդես է գալիս որպես «հանրության շահի» խոսնակ, այդ պահանջի լեգիտիմացումը պետք է բխի ոչ միայն պնդումներից, այլև այն հանրությունների ձևավորումից, որոնց անունից իրենք հանդես են գալիս:

Հետևաբար քաղաքացիական հասարակության լեգիտիմությունը պետք է պայմանավորված լինի հանրային ոլորտում հաղորդակցության և ներգրավվածության կարողությամբ: Մեր առանցքային պնդումն այն է, որ քաղհասարակության լեգիտիմության հիմքը նրանց կարողությունն է՝ ստեղծել և պահպանել «հանրություններ»: Այսինքն՝ ոչ թե պարզապես պատասխանատու լինել շահառուների կամ դոնորների առջև, այլ զարգացնել հանրային հաշվետվողականություն, որը ընկալվում է որպես հաշվետվողականություն ավելի լայն, բազմաշերտ հանրային լսարանների առջև՝ միաժամանակ ներկայացնելով և ձևավորելով այդ լսարանները:

Խորհրդարանական ընտրությունների նախաշեմին քաղհասարակության դերի շուրջ մտորումները թեև տարաշերտ են, սակայն հաճախ կրկնում են նախորդ տարիների, այսպես ասած, «ծուղակը»: Հիմնարար հարցը հետևյալն է՝ արդյոք հնարավոր է պահպանել վերահսկողի դերը, բայց նաև ռադիկալացնել ժողովրդավարության պահանջը: Ինչպե՞ս կարող է քաղհասարակությունը այս փոփոխվող ու բարդ իրականության մեջ մոբիլիզացվել՝ հանրության հետ փոխհարաբերությունները վերահաստատելու, դրա խնդիրները խորապես ճանաչելու և լսելի դարձնելու համար:

Այստեղ առանձնահատուկ կարևորություն ունի սոցիալական արդարության, հավասարության և սոցիալական ապահովության հարցերի ընդգրկումը ժողովրդավարության օրակարգում: Սոցիալական ապահովության և արդարության առանցքի վրա կանգնած ժողովրդավարությունը կարող է առաջ շարժվել՝ դուրս գալով ֆորմալ, մոնոլիտ ժողովրդավարության սահմաններից, որը սահմանափակվում է անհատական իրավունքներով, ազատ ու արդար ընտրություններով և մամուլի ազատությամբ: Թեև այս հարցերը և պահանջները հիմնարար են, սակայն հանրության և իշխանությունների հետ երկխոսությունը կարիք ունի խորանալու սոցիալական և տնտեսական արդարության, կառուցվածքային աղքատության, հավասարության, քաղաքական ապատիայի և անտարբերության հարցերի շուրջ՝ ժողովրդավարության ազատագրող ներուժը խարսխելով հենց դրանց վրա: Սա կարող է լինել հայաստանյան քաղհասարակության երկարաժամկետ անելիքի առանցքը ինչպես 2026 թվականի խորհրդարանական ընտրություններից առաջ, այնպես էլ դրանից հետո:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Ազատյան, Վ. (խմբ.). (2007): Հանրային ոլորտ. վիճարկման և վերըմբռնման միջև: Անկյունաքար:
- Անդրեասյան, Ժ., Ժամակոչյան, Ա., Իշխանյան, Ա., Մանուսյան, Ա., և Մանուսյան, Ս. (2018): *Նեղացող տարածքից դեպի հետհեղափոխական տարածք. Վերապատկերելով հայաստանյան քաղաքացիական հասարակության դերն ու հարաբերությունները:* Սոցիոսկոպ ՀԿ:
- Իշխանյան, Ա. (2013): *Քաղաքացիական հասարակությունը, զարգացումը և բնապահպանական ակտիվիզմը Հայաստանում:* Սոցիոսկոպ ՀԿ:
- Հաբերմաս, Յ. (2021). *Հանրայնության կառուցվածքային փոփոխությունը* (թարգմ.՝ Հ. Ստեփանյան). Մեդիամաքս:
- Մուֆ, Շ. (2024): Հանուն ժողովրդավարության ագոնիստական մոդելի: հրատարակված՝ Մկրտչյան, Ն. (խմբ.).*Պլյուրալիզմ, ժողովրդավարություն, սոցիալական արդարություն. ժամանակակից քաղ. մտքի ժողովածու (էջ՝ 52-88):* ԺԱԻ:
- Մարգարյան, Ն. (2022): *Ինչո՞ւ է մարդու իրավունքների օրակարգն այդքան գրավիչ աջական խմբերի համար.* https://socioscope.am/archives/3308:
- Սողոմոնյան, Վ., Մանուսյան, Ա., Խաչատրյան, Ն., Իշխանյան, Ա., և Մանուսյան, Ս. (2016): *Պայքարի փորձ[եր]*: Սոցիոսկոպ ՀԿ:
- Bauman, Z. (2007). *Liquid times: Living in an age of uncertainty*. Polity Press.
- Buyse, A. (2018). Squeezing civic space: Restrictions on civil society organizations and the linkages with human rights. *The International Journal of Human Rights, 22*(8), 966–988. https://doi.org/10.1080/13642987.2018.1492916
- Calhoun, C. (2011). Civil society and the public sphere. In M. Edwards (Ed.), *The Oxford handbook of civil society* (pp. 311–323). Oxford University Press.

- CIVICUS. (2024). *2024 State of Civil Society Report*. https://www.civicus.org/documents/reports-and-publications/SOCS/2024/state-of-civil-society-report-2024_en.pdf
- Edwards, R., & Mauthner, M. (2012). Ethics and feminist research: Theory and practice. In T. Miller, M. Birch, M. Mauthner, & J. Jessop (Eds.), *Ethics in qualitative research* (2nd ed.). SAGE Publications.
- Fisher, D. R. (2006). *Activism, Inc.: How the outsourcing of grassroots campaigns is strangling progressive politics in America*. Stanford University Press.
- Fraser, N. (1990). Rethinking the public sphere: A contribution to the critique of actually existing democracy. *Social Text*, (25/26), 56–80. https://doi.org/10.2307/466240.
- Giddens, A. (1990). *The consequences of modernity*. Stanford University Press.
- Giddens, A. (1991). *Modernity and self-identity: Self and society in the late modern age*. Polity Press.
- Habermas, J. (1989). *The structural transformation of the public sphere: An inquiry into a category of bourgeois society*. MIT Press.
- Hearn, J. (1998). The 'NGO-isation' of Kenyan society: USAID & the restructuring of health care. *Review of African Political Economy, 25*(75), 89–100.
- Ishkanian, A. (2008). *Democracy building and civil society in post-Soviet Armenia*. Routledge.
- Kluczewska, K., & Luciani, L. (2025). Framing feminism in Eurasia: Bottom-up strategies of depoliticisation and repoliticisation. *European Journal of Politics and Gender*, 1–25. https://doi.org/10.1332/25151088y2025d000000090
- Lang, S. (2013). The NGOization of civil society. In *NGOs, civil society, and the public sphere* (pp. 60–96). Cambridge University Press.
- Luhmann, N. (1979). *Trust and power: Two works by Niklas Luhmann* (H. Davis, J. Raffan, & K. Rooney, Trans.). Wiley.

- Luhmann, N. (1988). Familiarity, confidence, trust: Problems and alternatives. In D. Gambetta (Ed.), *Trust: Making and breaking cooperative relations* (pp. 94–107). Basil Blackwell.
- Luhmann, N. (2000). *The reality of the mass media* (K. Cross, Trans.). Stanford University Press. (Original work published 1996)
- McMahon, P. C., Pickering, P. M., & Pietrzyk-Reeves, D. (Eds.). (2024). *Activism in hard times in Central and Eastern Europe: People power*. Routledge.
- Splichal, S. (2002). *Principles of publicity and press freedom*. Rowman & Littlefield.
- van Prooijen, J.-W. (Ed.). (2021). *The psychology of political polarization*. Routledge.